

# ՀՈՒՅՄ

# لويس


LOUYS

Armenian Monthly

ISSN 1682-5446

Մշակութային և հասարակական ամսագիր

Փետրվարյան ապստամբությունը՝ թե խռովությունը



# Այս համարում

## Հայերեն բաժին

1- Խմբագրական.....	0
2- Հայաստան.....	1
3- Արևմտյան Հայաստան.....	10
4- Սփյուռք.....	13
5- Միջազգային.....	15
6- Հասարակական.....	18
7- Մշակութային.....	21
8- Գծանկարչություն.....	22
9- Առածանի.....	22

## Պարսկերեն բաժին

Հայ գրականություն և մշակույթ.....1-2

**Ճապիկի առաջին էջում՝** Փետրվարյան...  
**Վերջին էջում՝** Էդ. Բաղդասարյանի նոր գրերը

Համար 208, Փետրվար 2016  
No. 208, February 2016

ماهنامه لویس - شماره ۲۰۸ اسفند ماه ۱۳۹۴

# ԼՈՒՅՍ

Արտոնատեր եւ գլխավոր խմբագիր՝

**Էդ. Բաղդասարյան**

**Խմբագրական կազմ՝**

Թամար Փանոսյան, Վանիկ Բաղդասարյան  
Թամ Ղարախանյան, Մաթենիկ Ավետիսյան  
Էմմա Բեգիջանյան, Հովիկ Վարդումյան,

**Փոստարկը 15875-9488 Թեիրան - Իրան**

Էլեկտրոնային փոստ՝ [louys\\_monthly@yahoo.com](mailto:louys_monthly@yahoo.com)  
Ինտերնետային հասցեն՝ [www.louysonline.com](http://www.louysonline.com)

**LOUYS**

**Armenian Cultural and Social Monthly**

License-holder and Editor-in-Chief

**Edic Baghdasarian**

[www.Edic-Baghdasarian.com](http://www.Edic-Baghdasarian.com)

WEB master: **Baruyr Baghdasarian**  
**POBox 15875-9488 Tehran – Iran**  
E-mail : [louys\\_monthly@yahoo.com](mailto:louys_monthly@yahoo.com)  
Internet : [www.louysonline.com](http://www.louysonline.com)

**Թերթի Գինը՝** Հատարվածառ - 5000 ռիալ  
**Բաժանորդագրություն՝**


**Իրան՝** մեկ տարի՝ 60,000 ռիալ


**Արտասահման՝** մեկ տարի՝ 50 ԱՄՆ դոլար

Հոդվածների հեղինակների կարծիքները կարող են չհանրակրթել խմբագրության տեսակետներին:  
Արտատպության դեպքում հղումը «ԼՈՒՅՍ» - ին պարտադիր է:

# Պատմության իրական դասեր


Իր երկու ելույթներում (<<Շ համագումարում եւ սեպտեմբերի 17-ի հանրահավաքում, 2010) Լեւոն Տեր-Պետրոսյանը սահագանգում է, թե այսօրվա եւ 1920թ. իրողություններն ու իրավիճակները նման են, եւ ինչպես այն ժամանակ, այնպես էլ հիմա, կարող ենք ծանր ու անվերադարձ կորուստներ ունենալ, եթե երկրի քաղաքականությունը հաշվի չառնի այդ իրողությունները, ջրհի դրանցից ու չունենա կանխատեսելու կարողություն: Առաջին նախագահի սահագանգը կարելիություն է ստանում հատկապես նրանով, որ նա իր մեջ մեկտեղում է մի կողմից՝ գիտակ պատմաբանին, մյուս կողմից՝ առաջնակարգ ու փորձառու պետական գործչին, ինչը եզակի հնարավորություն է տալիս անզայր դիտարկել պատմաքաղաքական տեսանկյունից: Այս դեպքում պատմության դասը դառնում է առարկայական եւ ստույգ, ոչ թե վիպասանության կամ հրապարակահոսության համար նյութ, այլ գործնական քաղաքականության հիմք: Ո՞րն էր իրավիճակը 1920-ին: Օրվեկտիվորեն անխուսափելի էին, աղոտք, ան կորուստներ, որ կրեզինք, թե՛ կարող էինք նաեւ շահած դուրս գալ: Ի՞նչը մեզ պակասեց: Ո՞րն է նմանությունն այսօրվա հետ: Ռուսաստանը. Ռուսաստանը մեծ զիջումների գնով սեպարատ համաձայնագիր էր կնքել Գեորգիանի ու նրա դաշնակիցների հետ՝ այդ կերպ խորհրդային իշխանությունը ողջ երկրում հաստատելու, քաղաքագիտական անհավասար դժվարին շրջանը հաղթահարելու համար: Ֆրանսիայում ընթանում էր Առաջին համաշխարհային պատերազմում հաղթած պետությունների կոնֆերանսը, որտեղ Ռուսաստանը չունեղ վճիռների վրա ազդելու հնարավորություն: Այս ամենը չէր կարելի չտեսնել: Ակնհայտ էր նաեւ, որ արդեն վերականգնվող ու հզորագող Ռուսաստանը ձեռնամուխ էր եղել նախկին կայսրությունից պոկված երկրամասերը խորհրդայնագնելու ճանապարհով իր ազդեգրության ոլորտ վերադարձնելու գործին: Այդ երկրամասեղից էր Այսրկովկասը: Հետպատերազմյան Արեւմուտքը, մի կողմից՝ թույլագած երկարամյա պատերազմից, մյուս կողմից՝ զբաղված հետպատերազմյան կարգավորման հարգեղով, ջանում, բայց անգող էր գործուն ղմաղղել ռուսական նող իշխանության ծրագրերին, այդ թվում նաեւ Այսրկովկասում: Թուրքիան, Թուրքիան կանգնած էր հաղթող պետությունների կողմից մասնատման ծրագրի վտանգի առջեւ: Նույն հակառակորդի՝ Արեւմուտքի դեմ դաշնակից փնտրող Թուրքիան եւ Ռուսաստանն անմիջապես գտան իրար: Ռուսական բազմակողմ օգնության շնորհիվ Թուրքիայում Մուստաֆա Քեմալի կողմից գլխավորվող շարժումը ղվարությանը, բայց սկսեց շտկել իրավիճակը: Արդեն 1920թ. գարնանն առարկայագած էր ռուս-թուրքական ոչ ֆորմալ դաշինքը: Դրանից Ռուսաստանն ակնկալում էր իր ազդեղության վերականգնում Այսրկովկասում, Թուրքիան՝ մասնատումից փրկություն, հնարավող քի կորուստներով տարածքային ամբողջականության պահպանում: Մրանք նույնպես ակնհայտ իրողություններ էին: Աղորեջանը. Մեծ քաղաքական հմտություն պետք չէր տեսնելու համար, որ հենց առարկայագած այս տանդեմը, ոչ թե համաշխարհային պատերազմում հաղթած պետությունների փարիզայն կոնֆերանսը կամ այլ մի ուժ էր որոշելու Այսրկովկասի քարտեզն ու ճակատագիրը: Կարելու չէ՝ հնքնուղուն, թե Թուրքիայի օգնությանը, դա իսկույն տեսավ Աղորեջանը: 1920թ. ապրիլի 28-ին իշխող մուսավաթականները իշխանությունը հանձնեղին կոմունիստներին, Աղորեջան մտավ 11-րդ կարմիր բանակը:





**Պատմության իրական...**

Գրանով Ադրբեջանը դարձավ Այսրկովկասի ճակատագիրը որոշող այս դարչինքի «աստղագավառ անդամ» ստանալով դիրքային-քաղաքական առավելություն Հայաստանի նկատմամբ: Հայաստանը Հայաստանը կարող էր անմիջապես չեզոքագնել Ադրբեջանի այդ առավելությունը. մայիսի 1-ին հիշատակությունը վերագրելու գործողություններ ձեռնարկեցին հայ կոմունիստները (Մախիան աստատմություն): Գաշնակազան հիշատակությունը ան խեղճեց առյան մեջ: Սա ռնոհմագում էր Խորհրդային Ռուսաստանին: Ի հեճուկս վերելում բերված ակնհայտ հրոդուններին եւ գաղազաման միտումներին՝ Հայաստանի հիշատակությունը շարունակեց իր հույսը կապած պահել Արեւմուտքի հետ: Ընդ որում, գտնվել էին արեւմտյան դիվանագետներ, որոնք, թեւեւ ոչ պաշտոնապես, սակայն անկեղծորեն հուշել էին, որ թեւեւ Հայաստանի հարգը Ֆրոնայ մնում է Փարիզի կոնֆերանսի օրակարգում, սակայն ճիշտ կլինի, որ նա լեզու գտնի ու յուծումները փնտրի Այսրկովկասի խնդիրները կարգավորող իրական ուժերի՝ Ռուսաստանի եւ Թուրքիայի հետ: Ռուսաստանին հակադրվելուց մի քանի ամիս անց՝ սեպտեմբերին սկսվեց հաւթուրական պատերազմը, հինգ երկու ամիս հետո ավարտվեց Հայաստանի վերջնական կապիտուլյացիայով: Այդ միջակայքում՝ զատուսի 10-ին, Արեւմուտքը, կատարելով իր ձեռնարկն աստատանությունը, Հայաստանին էր նմիտել Մեւոի յթեղ պարմանագիրը՝ առանց որա իրազողման որեւէ իրական ետախոհի ու յծակի: Հայի հետին կերպ... Երբ ամեն ինչ ավարտվեց, արտասահման փախած դաշնակազան գործիչները հետ նայեցին կատարվածին, ունակ էր արահանգումներում իրատեսության ու քաղաքական մտածողության առկայծումները եղան: Մասնավորապես՝ որ ճիշտ կլինէր 1920-ի մայիսին ոչ թե ճնշելիս պատամբությունը, այլ հիշատակությունը հանձնելին կոմունիստներին: Ահա այդպիսի խոսուս մի օրինակ նշանակող դաշնակազան Շավրի Թորիկյանից. «Ու երբ հետադարձ ակնարկ մը կը նետենք մեր պատմության մոա, կարեւի է, թերեւս ոսել, որ նախատեսելով մեր ճակատագրի անխուսափելի հոովությունը, ավելի կանուխեն ակտը էր համաձայնի մեր հյուսիսի որազանի հետ եւ արտեսելով հուսաստի 1920 սեպտեմբեր-ոկտեմբերտ հաւթուրական պատերազմեն եւ Ռուսաստանի կարելոր մեկ մասի կորստեն: Կամ ոսել, որ ակտը էր մեկնիլ քաղաքական իրապատրոթենե, ճանչնալ թեմայական ուժի եւ լեզու գտնել անոր հետ շատ ավելի համեստ սահմանների յուրթ, քան հետագային Ռիլյանյան սահմանները» (Ա. Խատիայան, Հայաստանի Հանրապետության ծագումն ու գաղազումը, 1968, Ներածական, էջ 6-7): Իսկ որո՞նք էին այդ «ավելի համեստ», քաղ ավելի քան թեայ սահմանները. Ղարս, Արդահան, Սուրմայու, Նախիջեան: Ավելագրած՝ մի մաս էլ Վանի վիլայեթից, հինգ խնդրում էր Քենադը, թեթ Հայաստանն որ հստոգ հաներ Փարիզի կոնֆերանսի օրակարգից: Դրան էլ ավելագրած՝ առնվազն Լեռնաիկ Ղարաբաղ եւ Չանգեզուր: Ասում ենք՝ առնվազն, քանզի ասահովելու համաղ հիմնական հնոդի՝ հորհողայնագման ուուուագումը եւ հուսափելու համար յրազուղիք քարդություններից, Ռուսաստանի հիշատակությունը մի սկզբունք էր որդեգրել, սահմանագատումն անել այնպես, որ հայաբնակ տարածքներն ու բնակավայրերը չհայտնվեն Ադրբեջանի կազմում, արդբեջանաբնակ տարածքները՝ Հայաստանի: Իսկ ի՞նչ արեց 1920-ի հիշատակությունը. Կառած մնագ Փարիզից, ստագավ Մեւոի յթեղ թուրթը եւ պատերազմ Թուրքիայի դեմ: Այդ պատերազմում վերջնական կապիտուլյացիայի ենթարկվելուց հետո միայն նա հիշատակությունը հանձնեց կոմունիստներին՝ Արեւսանդրաստի ստոդագուցի պարմանագրով փաթեթավորված: Այնու կողմում էին Ղարսը, Արդահանը, Սուրմայուն ու Վանի մի մաստ ստանալու հնարավորությունը: Բայց ռեթ կողմած ճեղ ամեն հն: 1920թ. նոտեմբերի 29-ին, Հայաստանում խորհրդային հիշատակություն հոչակումից անմիջապես հետ, Ադրբեջանը պաշտոնապես հայտարարեց, որ այդ առիթով վերագրած է համարում սահմանային վեճերը, Լեռնային Ղարաբաղը, Նախիջեանը եւ Չանգեզուրը ճանաչում է Հայաստանի կազմում: Հասկանալի է, որ սույն հայտարարությունն իրականում արվում էր Ռուսաստանի կողմից, Թուրքիայի հետ համաձայնեցված, Ադրբեջանի բերանով: Հասկանալի է նաեւ, որ դրա դիմագ ակնկալվում էր խորհրդայնագումը առանց խոչընդոտների իրականացնելու հնարավորություն: Սակայն հաջողող վեց-տոթ ամիսների ռեթագումը բոող հակական տարածքներում ծավալվեց ամենաբողուն ռնողմագում հորհողայնագման դեմ. Լեռնային Ղարաբաղում՝ աստատմություն Թեւանի գլխավորությամբ եւ Հայաստանում՝ Գաշնակազանյան փետրվարյան հոովությունը, հինգ ամենավճողող յրթանում Հայաստանը գրկեց ճանաչված հիշատակությունից: Եւ այստեղ հարգը, բնականաբար, այդ ռնողմագման արդարագիտության ու ոչ արդարագիտության, պաշտոնապես կամ փաստագի հն հիշատակություն լինել-չլինելու կամ իրագիտնայ որեւէ այլ հարթության վրա յաետը է դնել կամ փնտրել: Հարգը ակտը է դնել քաղաքական հարթության վրա եւ դատել ստագված հետեւյալ արդյունքներով. նոր հակամարտության այդ ռնողագումն ու դրա հետեւանողով հօողուտ Ադրբեջանի եւ Թուրքիայի յուծվեցին Նախիջեանի եւ Լեռնային Ղարաբաղի հարգերը: Անորատրած Իսկ այժմ՝ անողատրանսը կողմանատատ այս սխաղ հետին յովով արձանագրած ուրչնակազան գողծի վեողբելոյա մնող շարունակությունը, որ, բնականաբար, արողատում է. «Այս բողող ոուուին է ոսել այսօր: Բայց քաղաքական դեկավադներեն կարելի է սպասել, որ այն նախատեսել անհավանականը, անտրամաբանականը, անիրականը»:



**Պատմության իրական...**

Հակիրճ լինելու համար ասենք միայն, որ, ի տարբերություն Հայաստանում իշխող դաշնակների, նույն այդ «անհավանականը, անտրամաբանականը, անիրականը» ժամանակին եւ ստույգ կարողացան «նախատեսել» Ադրբեջանում իշխող մուսավաթականները, եւ դա փաստ է: Վկայակոչենք նաեւ Առաջին հանրապետության վարչապետ Հ. Քաջագունու խոսքը, որ կարծես հենց այդ արդարացման պատասխանն է. «Եթե ճիշտ է, որ կառավարել՝ ասել է նախատեսել, սպա ուրեմն մենք միանգամայն անպետք կառավարիչներ ենք եղել, որովհետեւ հենց այդ նախատեսելու ընդունակությունն է, որ չենք ունեցել բնավ: Մենք շարունակ սխալած ենք եղել մեր հաշիվների մեջ եւ շարունակ անակնկալների հանդիպած, անակնկալներ՝ միայն մեզ համար, որովհետեւ չենք գիտակցել նախատեսել»: Վտանգը եւ յուծումը Ռ՝րն է վտանգը: Ինչպես 1920-ին, այնպես էլ հիմա, Այսրկովկասում հարբելու յուծող իրական ուժի (ուժերի) հետ քաղաքական հարաբերություններում Ադրբեջանի դիրքերի առաջանցիկ ամրապնդումն է: Այդ քանն Ադրբեջանին հաջողվեց 1920-ին, եւ շահեց Նախիջեանն ու Ղարաբաղը: Այդ քանը Հայաստանին հաջողվել է անել միայն մեկ անգամ՝ 1990-ականներին, եւ շահել է Լեռնային Ղարաբաղը: Այդ քանը չկարողացավ ու չի կարողանում անել Հայաստանն այսօր, եւ հետեւանքերը կարող են տիրու լինել: Ռ՝րն է պատճառը: Իրո՞ք կանխատեսելու ու հաշվարկելու դժվարությունը կամ անկարողությունը: Այդ դեպքում ակտը է ընդունել 1920-ի մուսավաթականների մտավոր գերագանցությունը դաշնակների, եւ այսօր՝ Ալիեի մտավոր գերագանցությունը Սերժ Սարգսյանի նկատմամբ: Բայց, ինչպես այն ժամանակ, այնպես էլ հիմա, խոսքը ոչ այնքան կանխատեսելու, որքան առկա իրողություններն ու բացահայտ գործընթացները տեսնելուն է վերաբերում: Ուստիե՛՝ բողողմին այլ է պատճառը. պատճառը իշխանության մեջ քաղաքական մտքի բացակայությունն է, քաղաքական էության չգոյությունը, նրա անտիքաղաքական էությունը: Այլ կերպ անհնար է բացատրել, երբ պարտված իշխանությունը կարող է մտքով անցկացնել «առնել Հանրապետության փողերը եւ փախչել հայդե՛ Փարիզ»: Այլ կերպ անհնար է բացատրել, որ Նախագահի պաշտոնը մարդու կարողությունը 10 տարվա ռնթագրում գողից կարող է հասցնել 4 միլիարդ դոլարի, նույն՝ «հանրապետության փողերի» հաշվին: 1920-ին 180 հազար կմ. քառ. «Մեր» ստանալու համար չէ, որ դաշնակները «հայրենասիրաբար» մերժեցին 65-70 հազար քառ. կմ. ը: Ճիշտ նույն կերպ՝ արդեն 10 տարի այս վարչախմբի խնդիրը «հայրենասիրաբար» Ղարաբաղի անկախությանը հասնելը չէ: Երկու դեպքում էլ նպատակը իշխանություն պահելն է՝ հանուն դրա հայրենիքը «հայրենասիրաբար» գողաբերելով: Ուստիե՛՝ պատմության իրական դասը թելադրում է այն միակ ելքը, ինչը ձեւակերպեց Հանրապետության Հիմնադիր-նախագահն իր ելույթում. արտահերթ նախագահական, սպա՝ արտահերթ խորհրդարանական ընտրություններ, սահմանադրական կարգի եւ օրինական, այսինքն՝ քաղաքական որակ ունեցող իշխանության հաստատում: Այսպես կունենանք նույնպիսի կողուստներ, ինչպիսիք ունեցանք 1920-ին:

Ա. Հովսեփյան

**ماهنامه ارمنی - فارسی زبان لویس**

صاحب امتیاز، مدیر مسئول و سردبیر ادیک باغداساریان

نشانی نشریه: تهران صندوق پستی ۹۴۸۸-۱۵۸۷۵

پست الکترونیکی: [louys\\_monthly@yahoo.com](mailto:louys_monthly@yahoo.com)

نشانی اینترنت: [www.louysonline.com](http://www.louysonline.com)

چاپ احسان- تهران خیابان انقلاب شماره ۱۱۴۸ کد پستی ۱۳۱۵۷-۶۳۵۶۱ تلفن ۶۶۴۹۵۷۶۱

تکشماره ۵۰۰ تومان اشتراک مجله: تکشماره ۵۰۰ تومان. ایران یک سال ۶۰۰۰ تومان

خارج ۵۰ دلار شماره حساب ۱۴۰۶۸۶۴۹۲ بانک تجارت شعبه مجیدی سه راه ارامنه

- ◆ مقالات و دیدگاه های مندرج در ماهنامه «لویس» ازوما ینانگر موضع مدیر مسئول و هیئت سردبیری نیست.
- ◆ مقالات، عکس ها و مطالب رسیده باز گردانده نمی شود.
- ◆ نشریه در حکم و اصلاح مقاله ها مجاز است.
- ◆ استفاده از مطالب «ماهنامه لویس» با ذکر ماخذ آزاد است.



**Հայաստանի Հանրապետություն**

**Կոմանդոս. Բախման դեպքում Ադրբեջանն ամբողջովին կոչնչացվի**



Եթե դարաբաղյան հարցի պատճառով Հայաստանի ու Ադրբեջանի միջև խոշոր ընդհարում լինի, դա կհանգեցնի Ադրբեջանի միակողմանի ոչնչացմանը: Այս մասին փետրվարի 3-ին մամուլի առուլիսի ժամանակ հայտնել է դարաբաղյան պատերազմի մասնակից, գեներալ մայոր Արկադի Տեր-Թադևոսյանը (Կոմանդոս):

Նրա խոսքով, սա նաև շատ փորձագետների, Ադրբեջանի դաշնակիցների ու Թուրքիայի տեսակետն է: «Մենք պատերազմ չենք ուզում, բայց Ադրբեջանը կարող է ավանտյուրայի գնալ: Հիմք ընդունելով միջազգային իրավունքը՝ մենք կարող ենք հասցնել ու կհասցնենք կանխիչ հարված», - շեշտել է Արկադի Տեր -Թադևոսյանը: Կոմանդոսը նաև հավելել է, որ Ադրբեջանում շատ բարդ իրավիճակ է ձևավորվել ազգային փոքրամասնությունների դրության համատեքստում:

**Պատերազմի դեպքում Ադրբեջանը՝ որպես պետություն, կդադարի գոյություն ունենալ. Արման Նավասարդյան**



Ադրբեջանի եւ Թուրքիայի քաղաքականությունն ուղղված է ԵԱՀԿ Մինսկի խմբի դեմ: Այս մասին Լուրեր-ի թղթակցի հետ գրույցում ասել է արտակարգ եւ լիազոր դեսպան Արման Նավասարդյանը:

Անդրադառնալով ԵԱՀԿ ՄԽ գործունեության մասին Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիևի հայտարարությանը՝ նա նշեց, որ հիմա Ադրբեջանն ու Թուրքիան սկսել են գործել այդ ուղղությամբ: «Եթե Ադրբեջանը դուրս կա ԵԱՀԿ Մինսկի խմբի կազմից, ապա ինքն էլ հենց կտուժի, քանի որ

այս պահին չկա այլ կառույց, որը զբաղվում է դարաբաղյան հակամարտության կարգավորմամբ:

Ադրբեջանական կողմը չի համաձայնում ԵԱՀԿ ՄԽ ամերիկացի համանախագահ Ջեյմս Ուորրքի առաջարկին: Հիմա հարցն այս կերպ է դրված. Անհրաժեշտ է կարգավորել սահմանին խնդիրը եւ միայն դրանից հետո անցնել բանակցությունների, քանի որ այս պահին բանակցություններն անհնար են», - 6 ընդգծել է Նավասարդյանը:

Նա չի բացառել, որ Բաքուն մտադիր է պատերազմ սկսել: «Երբ զագանին փակուղի եւ մտցնում, նա հարձակվում է: Ադրբեջանի դեպքում նման իրավիճակ է ստեղծվել: Կարծում եմ, որ անգամ Ռուսաստանը չի կարող կանգնեցնել դա: Ամեն բան կախված է նրանից, թե ինչպես կգարգանան իրադարձությունները Սիրիայում», - նշել է փորձագետը:

Նրա կարծիքով պատերազմի դեպքում Ադրբեջանը՝ որպես պետություն, կդադարի գոյություն ունենալ, քանի որ իրավիճակն այնտեղ շատ ծանր է: «Թալիշներն ու մյուս ազգային փոքրամասնությունները Ադրբեջանում իսկական ական են: Տնտեսական վիճակն այնտեղ նույնպես ծանր է», - նշել է Արման Նավասարդյանը:

Հիշեցնենք, որ Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիևը ԵԱՀԿ ՄԽ համանախագահներին մեղադրել էր իսլամաֆոբիայի եւ երկակի չափանիշներ կիրառելու մեջ: «Ճատ եմ ցավում, որ Մինսկի խմբի համանախագահները, որոնք պետք է զբաղվեն այդ հարցով, ձգտում են ոչ թե կարգավորման, այլ հակամարտության ստեղծման: Նրանց այսօրվա գործունեությունը բացարձակապես անիմաստ է: Նրանք ոչ միայն Հայաստանի վրա ճնշում չեն գործադրում, այլ նաև պաշտպանում են նրան հնարավոր խնդիրներից: Մենք մուտուլման ենք, այդ պատճառով էլ մեզ վերաբերում են երկակի չափանիշներով», - ասել էր Ալիևը:

**Հայաստանն ու Իրանը պայմանավորվել են ստեղծել նոր միջազգային տրանսպորտային ուղի**



Թեիրանում Տրանսպորտի եւ կապի նախարար Գագիկ Բեգլարյանի վարած բանակցությունների արդյունքում պայմանավորվածություն է ձեռք բերվել Հնդկաստանը Իրանի, Հայաստանի, Վրաստանի տարածքով ու Սեւ ծովով Եվրոպային կապող միջազգային տրանսպորտային ուղու ստեղծման վերաբերյալ, հաղորդում է «Ազատությունը»:

Ռադիոկայանի հետ գրույցում Բեգլարյանը նշել է, թե իրենց հաշվարկով այս ուղին ավելի էժան է լինելու, քան Ադրբեջանով եւ Թուրքիայով անցնող ուղիներն են. «Իրանով անցնող բոլոր բեռները, որոնք գնալու են Եվրոպա կամ Ռուսաստան, փորձելու ենք մեքենայով ապրանքը բերել մինչեւ Երասխ, Երասխից գնացքներով Փոթի, արդեն Փոթիից նավով դուրս գանք Եվրոպա»:

Ըստ նախարարի, Հայաստանի տարածքով այդ ուղու անցնելը ապահովելու համար այս տարի մեկնարկելու է Հյուսիս-Հարավ ավտոմայրուղու Սյունիքի ու Վայոց ձորի հատվածների շինարարությունը: Ավտոմայրուղու այդ հատվածը Ազարակը կկապի Երասխ երկաթուղային կայարանին, որը երկաթուղային կապ ունի Վրաստանի սեւծովյան նավահանգիստների հետ • «Մենք այս տարի մեծ ուժ ենք ներդնելու (Հյուսիս - Հարավ ավտոմայրուղու) Հարավի կողմը: Հարավից եթե կարողանանք հասցնենք Քաջարան • • • ամենադժվար մասը Ազարակից Քաջարան է: Մենք բավականին շատ այդտեղ ենք կարողանում ժամանակ եւ ճանապարհը ավելի արագացնենք, եւ Քաջարանից Միսիան վաթսուս կիրմետր շահում ենք: Մենք այս տարի որ սկսենք աշխատանքները Ազարակից, իրանք կհասկանան, որ իրականում մեր այլընտրանքային ճանապարհն ավելի լավն է»:

«Մենք պայմանավորվեցինք, որպեսզի երկու կանտեյներներ Բոմբեյից բերենք՝ Իրանով, Պարսից ծոցով, Հայաստանով հասցնենք Սեւ ծով եւ այնտեղից Եվրոպա՝ որեւէ եվրոպական քաղաք, կոնկրետ ֆիքսենք գինը», - փոխանցել է Գագիկ Բեգլարյանը՝ հավելելով, որ պայմանավորվել են նաեւ երկու մեքենա Հայաստանից Իրանի տարածքով ուղարկել Իրաք՝ ճշգրտելու տարանցման գինը, որպեսզի այդ ուղին եւս կարողանան գործարկել:

Նախարարի խոսքով, իրանական կողմին ներկայացվել է երկու երկրները կապող երկաթգծի նոր ուղի՝ Մեղրի - Վայոց ձոր - Սեւան տարբերակի փոխարեն՝ Մեղրի - Վայոց ձոր - Երասխ: Նրա փոխանցմամբ, հաջորդ շաբաթ Երեւան են ժամանելու իրանցի մասնագետները՝ ուսումնասիրելու նոր տարբերակը • «Հնարավոր է, սա ավելի կարճ լինի եւ ավելի արագ կառուցելու լինի ապագայում: Իրանական կողմը շահագրգռվածություն ցուցաբերեց նոր երկաթգծի տեխնիկական ուսումնասիրության եւ վերջնական նախագծերի հարցում մասնակցություն ունենա եւ մեզ օգնի»:

## Քննարկման փուլում է Իրաք-Իրան-Հայաստան ճանապարհի հարցը. Արմեն Երիցյան



Քննարկման փուլում է Իրաք-Իրան-Հայաստան ճանապարհի հարցը: Այս մասին, այսօր՝ փետրվարի 3-ին, ՀՀ-ում Իրանի նորանշանակ դեսպան Սեյեդ Քազեմ Մաջադիի եւ ԻԻՀ դեսպանության խորհրդական Սոփանի Փարիի հետ հանդիպման ժամանակ նշել է ՏԿԱԻ նախարար Արմեն Երիցյանը:

ՏԿԱԻ-ից Լուրերին հայտնում են, որ շնորհավորելով պարոն Մաջադիին դեսպանի պաշտոնում նշանակվելու կապակցությամբ՝ նախարար Երիցյանը ներկայացրեց ՏԿԱԻ-ի ծառայություններն ու գործառնությունները՝ նախանշելով այն բնագավառները, որոնցում

նախարարությունը կարող է նպաստել հայ-իրանական համագործակցության խորացմանը: Նախարարը ներկայացրեց նաեւ իր այցը Իրաքի Հանրապետություն՝ նշելով, որ քննարկման փուլում է Իրաք-Իրան-Հայաստան ճանապարհի հարցը:

Շնորհակալություն հայտնելով նախարարին ջերմ ընդունելության համար՝ դեսպան Սեյեդ Քազեմ Մաջադին նշեց, որ նպատակ ունի խորացնել Հայաստանի եւ Իրանի համագործակցությունը բոլոր բնագավառներում:

ՏԿԱԻ-ի հետ համատեղ աշխատանքների մասով քննարկվեց համագործակցությունը սեյսմիկ պաշտպանության, փրկարարաորոնողական աշխատանքների կազմակերպման եւ իրականացման, բնական եւ տեխնածին աղետների կանխման բնագավառում:

Տարածքային կառավարման ոլորտում առանձին մարզերի եւ քաղաքների միջեւ համագործակցությունը խորացնելու նպատակով դեսպանը նախարար Երիցյանին խնդրեց ՏԿԱԻ նախարարության անունից հրավեր ուղարկել Իրանի Հանրապետության Իսպահանի, Հորմոզգանի, Գիլանի նահանգապետերին եւ Թեհրանի մարզպետին: Այցի նպատակն է խորացնել Իրանի եւ Հայաստանի մարզերի համագործակցությունը գյուղատնտեսության եւ հատկապես ձկնաբուծության ոլորտում:

Կարեւորելով երկու երկրների միջեւ մերձեցումը նաեւ մարզային մակարդակով՝ նախարար Երիցյանը հանձնարարեց պատրաստել համապատասխան հրավերները՝ հավաստիացնելով դեսպանին, որ ՏԿԱԻ նախարարությունն իր գործառնությունների ոլորտում կանի ամեն ինչ հայ-իրանական համագործակցությունը խորացնելու եւ որակապես նոր մակարդակի վրա բարձրացնելու համար:

Հանդիպման ավարտին նախարար Երիցյանը հյուրերին ներկայացրեց ՀՀ ՏԿԱԻ Ճգնաժամային կառավարման ազգային կենտրոնի եւ ՀՀ կառավարության սերվերային տնտեսության պահուստի հնարավորությունները

## Մահացել է ակադեմիկոս Հրաչիկ Միմոնյանը



Երեւանում 88 տարեկանում մահացել է ակադեմիկոս պատմաբան, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, ՀՀ պետական մրցանակի դափնեկիր Հրաչիկ Ռուբենի Միմոնյանը:

Նա ծնվել է 1928թ. դեկտեմբերի 9-ին Սյունիքի Ծիմուհայր գյուղում՝ մտավորականի ընտանիքում: 1952թ. ավարտել է Երեւանի պետական համալսարանի պատմության ֆակուլտետը: Հայկոմկուսի մարմիններում եւ գիտական հիմնարկներում վարել է գանազան պաշտոններ: 1971թ. նրան շնորհվել է պրոֆեսորի կոչում, 1996թ. ընտրվել է ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի իսկական անդամ: 1977-90թթ. Հ. Միմոնյանը եղել է Հայաստանի կոմկուսի կենտկոմի՝ կուսակցության պատմության ինստիտուտի

տնօրեն, 1993-94թթ.՝ ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի հասարակական գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղար, 1991-93թթ.՝ սիլոնոքահայության հետ կապերի կոմիտեի նախագահ, 1994-2006թթ.՝ Ակադեմիայի նախագահի խորհրդական, 1999-2003թթ.՝ ղեկավարել է Երևանի պետական համալսարանի հայոց պատմության ամբիոնը, 2008թ.-ից ղեկավարում էր ԵՊՀ հայագիտական հետազոտությունների ինստիտուտի ցեղասպանագիտության բաժինը:

Նա եղել է ՀԽՍՀ Գերագույն Խորհրդի եւ ՀՀ Ազգային Ժողովի պատգամավոր:

Հրաչիկ Միմոնյանը գործուն մասնակցություն է ցուցաբերել Արցախյան շարժմանը: Նա երեք տասնյակ արժեքավոր մենագրությունների եւ ավելի քան չորս հարյուր գիտական հոդվածների հեղինակ է: Նա մտավորականի բարձր տիպար էր, պարզ, անկեղծ ու բարյացակամ: Ցավակցում ենք Հրաչիկ Միմոնյանի Հարազատներին:

### Հրաչիկ Միմոնյանը իր ողջ գործունեությունը նվիրեց հայ ժողովրդի նորագույն պատմության ուսումնասիրմանը. ՀՀ նախագահ

ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանը ցավակցական ուղերձ է հղել Միմոնյանների ընտանիքին՝ ճանաչված մտավորական, պատմական գիտությունների դոկտոր, Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի ակադեմիկոս Հրաչիկ Միմոնյանի մահվան կապակցությամբ:

«Հրաչիկ Միմոնյանը իր ողջ գիտական գործունեությունը նվիրեց հայ ժողովրդի նորագույն պատմության ուսումնասիրմանը և արժանիորեն վաստակեց իր գործընկերների և ուսանողների հարգանքն ու համակրանքը:

Խորին ցավակցություն են հայտնում ձեզ, ձեր հարազատներին, մերձավորներին և անվանի պատմաբանի գործընկերներին»,-ասված է Հանրապետության նախագահի ցավակցական ուղերձում:

### Ամինաթյունների հայաստանյան տեխնոլոգիայով հետաքրքրված են Novartis-ը եւ Procter & Gamble-ը



«Արմբիոտեխնոլոգիա» կենտրոնի՝ ոչ սպիտակուցային ամինաթյունների ստացման տեխնոլոգիայով ղեկավարվող խոշոր ընկերություններ են հետաքրքրված: Այս մասին Լուրեր-ի թղթակցի հետ զրույցում հայտնեց «Արմբիոտեխնոլոգիա» գիտաարտադրական կենտրոնի տնօրեն, Հայաստանի ԳԱԱ ակադեմիկոս, քիմիական գիտությունների դոկտոր Աշոտ Սաղիյանը:

Տեխնոլոգիան թույլ է տալիս նյութում անհրաժեշտ իզոմեր ստանալ, որը կարող է օգտագործվել հակավիրուսային, նարկոլոգիական եւ ուռուցքաբանական դեղամիջոցներում:

Համագործակցության շուրջ բանակցություններ են ընթանում, մասնավորապես, Novartis եւ Procter&Gamble կորպորացիաների հետ: Հնարավոր գործընկերների հետ կենտրոնը քննարկում է նաեւ համատեղ ձեռնարկություն ստեղծելու գաղափարը: «Մեզ առաջարկում են վաճառել տեխնոլոգիան, բայց մենք չենք ցանկանում: Այնքան էլ շահավետ չէ, հասկանում եք», - նշել է Սաղիյանը:

Կենտրոնն արդեն պատենտավորել է նյութը եւ այն թողարկում է ոչ մեծ քանակությամբ՝ տարեկան մի քանի հազար դոլարի: Ընկերությունը ծրագրում է արտադրությունը հասցնել հարյուր հազարավոր դոլարների: «Դրա համար արտադրական հզորություններ են պետք, իսկ մենք հոսքագիծ չունենք: Ինքնուրույն ձեռք բերելը նույնպես տարբերակ է: Ամեն դեպքում, ավելի լավ է ինքնուրույն աշխատենք, քան տեխնոլոգիան ուրիշի վաճառենք», - հավելեց Սաղիյանը:

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ ԱՇԽԱՏԱԿԱԿԱՆ ԶԵՆՈՒՄԻ ՀԱՍԱՐԱԿԱՅՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՏԵԳԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՄԻԶՈՑՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊԵՐԻ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

DEPARTMENT OF PUBLIC RELATIONS AND MASS MEDIA OF THE PRESIDENT OF THE REPUBLIC OF ARMENIA

Հեռ.՝ 522.364, 525.392, ֆաքս՝ 522.364

Էլ. փոստ՝ press@president.am , URL: http://www.president.am

2016-02-12 / Նախագահը ներկայացրել է ՀՀ ԱԿԾ նորանշանակ տնօրենին

ՀՀ Նախագահ Սերժ Սարգսյանն այսօր ՀՀ կառավարության անընթեք ազգային անվտանգության ծառայության ղեկավար կազմին ներկայացրել է ՀՀ ԱԿԾ նորանշանակ տնօրեն Գեորգի Կուտոյանին: Հանրապետության Նախագահը տեղեկացրել է նաև, որ ԱԿԾ նախկին տնօրեն Գորիկ Հակոբյանը օրենքի շրջանակներում ազատվել է զբաղեցրած պաշտոնից՝ տարիքը լրանալու կապակցությամբ և Հայրենիքին իր ծառայությունը կշարունակի ՀՀ Նախագահի խորհրդականի պաշտոնում: Հանրապետության Նախագահը Գորիկ Հակոբյանին պարգևատրել է Սուրբ Վարդան Մամիկոնյանի շքանշանով և շնորհակալություն է հայտնել նրան: «Գորիկ Գուրգենի՛, մեր պետության անունից ես Ձեզ շնորհակալություն եմ հայտնում երկար տարիների հետևողական և նվիրական աշխատանքի համար: Չնայած այսօրվանից Դուք ստանձնում եք նոր պարտականություններ, պատասխանատվության նոր ոլորտ, բայց հավատացած եղեք, որ Ձեր անունն արդեն իսկ գրվել է ՀՀ պետականաշինության պատմության մեջ: Դուք պրոֆեսիոնալների մեծ սերունդ եք դաստիարակել, և վստահ եմ, որ այսուհետ ևս բազմաթիվ մարդիկ դաստիարակվելու են Ձեր օրինակով: Ծնորհակալ եմ դրա համար, Գորիկ Գուրգենի՛: Վստահ եմ, որ պարոն Հակոբյանը դեռևս շարունակելու է իր փորձն ու գիտելիքները ներդնել ՀՀ պետականաշինության կարևոր գործում: Հաշվի առնելով այս ամենը՝ ես երեկ նաև մեկ այլ հրամանագիր եմ ստորագրել, որով Գորիկ Հակոբյանին պարգևատրել եմ Սուրբ Վարդան Մամիկոնյանի շքանշանով: Կարծում եմ, որ ՀՀ գեներալիտետի, բարձր զինվորականության համար այս շքանշանը շատ նվիրական և խորհրդանշական է: Ձեր վաստակած պարգևն է:

Ինչպես, վստահ եմ գիտեք, ես մեկ այլ հրամանագիր եմ ստորագրել և Ազգային անվտանգության ծառայության տնօրենի պաշտոնին նշանակել եմ Գեորգի Կուտոյանին: Ծնորհակալ եմ պարոն Կուտոյանին և հաջողություն մաղթում այս առավել քան պատասխանատու պետական պաշտոնում: Կարծում եմ, որ ԱԿԾ նորանշանակ տնօրենն իր սկզբունքայնությամբ, հետևողականությամբ, աշխատասիրությամբ, ինտելեկտ, նաև



Ազգային անվտանգության ծառայության գեներալների ու սպաների աջակցությամբ և, առաջին հերթին ձեր աջակցությամբ, պատվով կկատարի այս պատասխանատու պարտականությունը: Մա, իրոք, չսպիսակացն պատասխանատու պաշտոն է և չսպիսակացն պատասխանատու նշանակում: Պարոն Կուտոյանը պետական աշխատանքի բարձր պրոֆեսիոնալ է: Անգամ ընթացիկ, առօրյա խնդիրներ լուծելիս նա հիմքում քաղաքականություն է դնում: Նա ունակ է համակարգել գուզահեռ ընթացող գործընթացները և գտնել խնդրի լուծման ամենահիշտ ճանապարհը: Հինգ տարի ես աշխատել եմ Գեորգի Կուտոյանի հետ և այդ հինգ տարում ինձ մոտ անբավարարվածության որևէ նշան չի եղել: Սկզբունքային է, խստապահանջ իր նկատմամբ և, իհարկե, իր ենթակաների նկատմամբ:

Անցած տարվա դեկտեմբերին մեծածավալ սահմանադրական փոփոխությունների ընդունումը մեր երկրի համար, իրոք, շրջադարձային իրադարձություն էր: Դրա հետևանքով, ի թիվս այլ բարեփոխումների, արմատապես փոխվելու է մեր պետության կառավարման ձևը: Ինչպես պետական մյուս մարմինները, Ազգային անվտանգության ծառայությունը ևս կանգնելու է նոր իրողության և նոր պահանջների առջև՝ սկսած օրենսդրական համապատասխանեցումից, վերջացած փոխհարաբերությունների վերահիմնարկում: Մինչև 2018թ. տեղի է ունենալու իշխանության թևերի լուրջ վերադասավորում և պետական մարմինների լիազորությունների էական վերաբաշխում: Եվ այս անցումային փուլում ազգային անվտանգության մարմիններն իրենց գործառնությունների շրջանակներում պետք է ոչ միայն ապահովեն կառավարման համակարգի սահուն փոխակերպումը, այդ ընթացքում պետական իշխանության անընդհատությունը, այլև պետական մարմինների շարքում կարողանան ամրագրել իրենց արժանի տեղն ու կարգավիճակը: Այս ընթացքում ձեր առաջնային խնդիրներից մեկը լինելու է պետության ներքին անվտանգության ապահովումը, մասնավորապես՝ մի կողմից կոռուպցիոն երևույթների դեմ ավելի սուր պայքարը, մյուս կողմից՝ կանխարգելումը: Դուք պետք է պատրաստ լինեք ստանձնել այդ պատասխանատվությունը: Այդ քայլային, ստորագուցիչ դրսևորումների դեմ պայքարը հատկապես կարևորվում է երկրում իրականացվող սահմանադրական բարեփոխումների յուրյի ներքո: Այն էական դեր է ունենալու փոփոխությունների հանդեպ հավատի ու հանրային վստահության ձևավորման գործում: Ես կարծում եմ, որ իմ ասածը դուք շատ ճիշտ եք ընկալում: Մա չի նշանակում, որ մինչև հիմա ազգային անվտանգության մարմինները չեն պայքարել կոռուպցիայի դեմ, բայց ավելի սուր պայքարի անհրաժեշտություն կա այս փուլում: Եվ վստահ եմ, որ ազգային անվտանգության մարմինները կարողանալու են լինել համահունչ մեր հասարակությունում տեղի ունեցող փոփոխություններին: Ազգային անվտանգության ծառայությունը պետք է հուսալի և կայուն կառույց լինի հատկապես երկրի համար այս կարևոր անցումային փուլում: Մենք չունենք երկրորդ այդպիսի կամ նույնիսկ նման կառույց, հետևաբար՝ այս ոլորտում չենք կարող մեզ փորձարկումների շքեղություն թույլ տալ: Վստահ եմ, որ Ազգային անվտանգության ծառայություն նոր դեկավարությունը պահպանելու և զարգացնելու է ժառանգած լավագույն ավանդույթները, բարեխղճորեն և պատասխանատվությամբ է իրականացնելու մեր պետության և հասարակության անվտանգության ապահովման գործառնությունը»,-ասել է Նախագահ Սերժ Սարգսյանը:

ԱՄՇ նախկին տնօրեն Գորիկ Հակոբյանը շնորհակալություն է հայտնել Հանրապետության Նախագահին իր գործունեությանը տված նման բարձր գնահատականի համար: «Երջանկություն է, երբ մարդն այդքան տարի աշխատելուց հետո նման գնահատականով է թողնում իր պաշտոնը: Պարոն Նախագահ, լեթ տա Աստված, իմ առողջությունը ներքի, ես կշարունակեմ իմ աշխատանքը՝ ի բարօրություն մեր Հայրենիքի, և ինձ համար մինևնույնը չի լինի՝ կլինե՞ն հաջողություններ ազգային անվտանգությունում, թե՞ ոչ: Ես կանեմ ամեն ինչ, որպեսզի հաջողությունը շարունակվի և ավելի լավ լինի: Շնորհակալություն ձեզ»,-ասել է Գորիկ Հակոբյանը:

ԱՄՇ նորանշանակ տնօրեն Գեորգի Կուտոյանը շնորհակալություն է հայտնել ՀՀ Նախագահին՝ ցուցաբերած մեծագույն վստահության համար: «Հաշվի առնելով այն կարևորագույն գործառնությունները, որոնք օրենսդրությամբ

վերապահված են ազգային անվտանգության մարմիններին, պետական այս կառույցում ծառայության անցնելն ինձ համար մեծ պատասխանատվություն է և նույնքան մեծ պատիվ: Դուք միշտ բարձր եք գնահատել Ազգային անվտանգության ծառայության կողմից մեր երկրի անվտանգության և պետական շահերի հուսալի պաշտպանությունը: Նման վերաբերմունքը, թերևս, օրինաչափ է՝ նկատի ունենալով, որ այս ծառայությունը միշտ ունեցել է հմուտ դեկավարություն և բազմաթիվ նվիրյալներ, ովքեր իրենց ամենօրյա քրոնաշան աշխատանքի շնորհիվ կարողացել են պատվով կատարել իրենց առջև դրված խնդիրները: Պարոն Նախագահ, համոզված եմ, որ Ձեր ընդհանուր դեկավարությամբ և պարոն Հակոբյանի օժանդակությամբ ես և իմ գործընկերները կանենք հնարավոր ամեն ինչ, որպեսզի Ազգային անվտանգության մարմինների վաղեմի հեղինակությունը շարունակենք բարձր պահել: Պարոն Հակոբյան, ես նույնպես ուզում եմ շնորհակալություն հայտնել Ձեզ և, օգտվելով առիթից, շնորհավորել պետական բարձր պարգև ստանալու կապակցությամբ»,-ասել է Գեորգի Կուտոյանը:

URL:<http://www.president.am/hy/press-release/item/2016/02/12/President-Serzh-Sargsyan-visit-National-Security-Service/>

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ ԱՇԽԱՏԱԿԱԳՉՄԻ ՀԱՍԱՐԱԿԱՅՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊԵՐԻ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

DEPARTMENT OF PUBLIC RELATIONS AND MASS MEDIA OF THE PRESIDENT OF THE REPUBLIC OF ARMENIA

Հեռ.՝ 522.364, 525.392, Փաքս՝ 522.364

Էլ. փոստ՝ [press@president.am](mailto:press@president.am), URL: <http://www.president.am>

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ ՀՐԱՄԱՆԱԳԻՐԸ

Գ. ՀԱԿՈՒԲՅԱՆԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ ԽՈՐՀՐԳԱԿԱՆ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Նախագահի 2007 թվականի օգոստոսի 17-ի ՆՇ-193-Ն հրամանագրի 1-ին կետով հաստատված՝ Հայաստանի Հանրապետության Նախագահի աշխատակազմի կանոնադրության 16-րդ կետի 3-րդ ենթակետը՝

Գորիկ ՀԱԿՈՒԲՅԱՆԻՆ նշանակել Հայաստանի Հանրապետության Նախագահի խորհրդական:

2016-02-12

URL: <http://www.president.am/hy/decrees/item/2568/>

## Մահացել է Արման Մանարյանը

Փետրվարի 16-ին, 87 տարեկան հասակում կյանքից հեռացել է Արման Մանարյանը:

Կինոռեժիսոր, սցենարիստ, ՀԽՍՀ արվեստի վաստակավոր գործիչ, դերասան Երվանդ Մանարյանի կրտսեր եղբայրը՝ Արման Մանարյանը, ծնվել է 1929 թվականի դեկտեմբերի 15-ին Թեհրանում: 1949 թվականին ներգաղթել է Հայաստան: Սովորել է Երևանի Ռոմանոս Մելիքյանի անվան երաժշտական ուսումնարանում, ապա ուսումը շարունակել Երևանի պետական կոնսերվատորիայում: Սովորել է նաև Համամիությունական կինեմատոգրաֆիայի պետական ինստիտուտում (ՎԳԻԿ), որի ռեժիսորական բաժինն ավարտելուց հետո նվիրվել է կինոֆիլմերի նկարահանման գործին: 1961-ին նկարահանել է «Տժվժիկ» կարճամետրաժ ֆիլմը: Դրանից հետո «Կարինե» (1967), «Հեղինակ աղբյուր» (1971), «Վերադարձ» (1972), «Մորգանի

խնամին», «Բյուրականի աստղադիտարանը» եւ այլ կինոնկարներ: Գրել է նաեւ ֆիլմերի սցենարներ:



Արման Մանարյանը նաեւ «Մասնա ծոեր» Էպոսի «Մասունցի Դավիթ» ճյուղի անիմացիոն ֆիլմի ռեժիսորն է: Մուլտֆիլմի սցենարը թեւեւ գոյություն է ունեցել դեռեւս 1995-ից, սակայն նկարահանումները սկսվել են միայն 2001 թվականից եւ ավարտին հասցվել 2009 թվականին: Տարեկան հնարավոր է եղել ավարտել ընդամենը 10 րոպեանոց հատված: «Մասնա ծոեր» մուլտֆիլմի բեմադրող ռեժիսորը եւ սցենարի հեղինակը Արման Մանարյանն է, բեմադրող նկարիչը՝ Վարդան Չաքարյանը: Կոմպոզիտորը Արման Մանարյանի որդին է՝ Հայկ Մանարյանը, եւ դաշնակահար ու կոմպոզիտոր Խաչիկ Մահակյանը: Արտադրությունը՝ Հայաստանի ազգային կինոկենտրոնի: «Մասնա ծոերի» հերոսների ձայները հնչյունավորել են դերասաններ Կարեն Չանիբեկյանը, Ժենյա Ավետիսյանը, Երվանդ Մանարյանը եւ ուրիշներ: Մուլտֆիլմում նաեւ Խորեն Աբրահամյանի ձայնն է հնչում: Մանարյանը 2012 թվականին արժանացել է «Հայակ» հայկական ամենամյա առաջին կինոմրցանակաբաշխության Հատուկ մրցանակի:

## Մոսկվայի պայմանագրի չեղարկումը պաշտպանող նամակը ՌԴ նախագահի աշխատակազմից ուղարկվել է ԱԳՆ



ՌԴ Պետդումայի պատգամավորներ Վալերի Ռաշկինի եւ Սերգեյ Օբուխովի՝ 1921թ. մարտի 16-ին Թուրքիայի հետ կնքած բարեկամության եւ եղբայրության մասին Մոսկվայի պայմանագիրը խզելու առաջարկը պաշտպանող Ռուս-հայկական կազմակերպությունների համակարգող խորհրդի դիմումը, որն ուղարկվել էր Ռուսաստանի նախագահի աշխատակազմ, քննարկման նպատակով փոխանցվել է երկրի ԱԳՆ-ին:

Ռուս-հայկական կազմակերպությունների համակարգող խորհրդից հայտնեցին, որ այդ մասին իրենք տեղեկացել են նախօրեին:

Հիշեցնենք, որ Ռուս-հայկական կազմակերպությունների համակարգող խորհուրդը դիմել էր իշխանության գործադիր

եւ օրենսդիր թեւերի ղեկավարներին, ինչպես նաեւ Ռուսաստանի ԱԳՆ-ին, որտեղ իր աջակցությունն էր հայտնել ու ողջունել ՌԴ Պետդումայի պատգամավորներ Վալերի Ռաշկինի եւ Սերգեյ Օբուխովի՝ 1921թ. մարտի 16-ին Թուրքիայի հետ կնքած բարեկամության եւ եղբայրության մասին Մոսկվայի պայմանագիրը խզելու առաջարկը: Համակարգող խորհուրդը դիմել է նախագահին, վարչապետին, Դաշնության խորհրդին, Պետդումայի նախագահին, ՌԴ արտգործնախարարին:

Դիմումում, մասնավորապես, ասվում է. «Առաջարկը ճիշտ է եւ արտակարգ կարեւոր. Մոսկվայի պայմանագիրը ի սկզբանե Ռուսաստանի համար շահավետ չէր, քանի որ նախատեսում էր փաստացի պարտված կողմին հանձնել ռուս զինվորի արյունով գրաված հողերը: Պայմանագիրը ստորագրվել էր Հայաստանի պատվիրակության բացակայության պարագայում այն դեպքում, երբ նրանց հողերը հանձնում էին մի պետության, որը դրանից առաջ ջարդի էր ենթարկել իր 3 մլն քրիստոնյա քաղաքացիներին, որոնց կեսը հայեր էին:

Քրիստոնյաների ցեղասպանությունը ճանաչելու ցանկության բացակայությունը, ֆաշիստական Գերմանիայի հետ Երկրորդ համաշխարհային պատերազմում համագործակցելը, ՆԱՏՕ-ին անդամակցելը, Հյուսիսային Կիպրոսի օկուպացիան, քրդերի դեմ ռազմական գործողությունները, Չեչնիայի դեպքերի ժամանակ անջատողականներին աջակցելն ու արմատական ուկրաինական ուժերին օժանդակելը, ինչպես նաեւ Դրիմի իրադարձությունների ժամանակ տեղի ազգայնականներին օգնելը խոսում են այդ պետության մշտական ֆաշիստական եւ ցեղասպան բնույթի եւ հակառուսական ուղղվածության մասին: Եվ Սիրիայում թուրքական ուժերի գործողությունները, որոնց ընթացքում խոցվել էր ռուսական օդանավը, դրա վառ օրինակն է:

Ստեղծված իրավիճակում Ռուսաստանը պետք է ժամանակին համապատասխան քայլեր ձեռնարկի Թուրքիայի նվաճողական քաղաքականությանը պատասխանելու համար: Եվ 1921թ. Մոսկվայի պայմանագրի խզումը այդ միջոցներից մեկը կլիներ: Դա կծառայի Ռուսաստանի եւ այն ժողովուրդների շահերին, որոնք տուժել են Թուրքիայի ագրեսիվ քաղաքականությունից: Հայերը, հույները, ասորիները, եզդիները, Բալկանյան երկրների սլավոնները, արաբները, քրդերը եւ մյուսները սպասում են իրենց պատմական իրավունքների վերականգնմանը եւ անկասկած պատրաստ կլինեն օգնություն ցուցաբերել Մերձավոր Արեւելքում Ռուսաստանի քաղաքականությանը»:

Դիմումը ստորագրել են Ռուս-հայկական կազմակերպությունների համակարգող խորհրդի կազմում ընդգրկված 20 կազմակերպություններ:

## Իրան-Հայաստան 400 կՎ լարման օդային գծի կառուցումը կավարտվի 24 ամսում. նախարար

Վարչապետ Հովիկ Աբրահամյանի գլխավորությամբ կառավարությունում քննարկվել է ՀՀ էներգետիկայի եւ բնական պաշարների նախարարության 2015 թ. ընթացքում կատարված հիմնական աշխատանքների, ՀՀ կառավարության 2015 թ. գործունեության միջոցառումների ծրագրի, գերակա խնդիրների կատարման եւ գնահատված կատարողականի հաշվետվությունը:

Նախարար Երվանդ Չախարյանը տեղեկացրել է, որ քննարկումների եւ բանակցությունների արդյունքում 2015թ. սեպտեմբերից վերսկսվել է Իրան-Հայաստան 400 կՎ



լարման օդային գծի կառուցման ծրագրի ֆինանսավորումը: Համաձայն ծրագրի իրականացման ժամանակացույցի, վերոնշյալ օդային գծի կառուցումը նախատեսվում է ավարտել 24 ամսում: Հայաստան-Վրաստան 400 կՎ լարման էլեկտրա-հաղորդման օդային գծի կառուցման ծրագրի առաջին երկու փուլերի իրականացման նպատակով ստորագրված վարկային համաձայնագրերի շրջանակներում ներգրավվել է շուրջ 178 մլն եվրո: Նախատեսվում է նաև դրամաշնորհային ներդրում՝ մինչև 10 մլն եվրոյի չափով, որը կհատկացվի Եվրամիության Հանձնաժողովի կողմից: Ըստ Է. Չախարյանի՝ մեկնարկել են նաև Հայկական ԱԷԿ-ի շահագործման ժամկետի երկարաձգման համակարգերի եւ սարքավորումների համալիր գնման աշխատանքները, որոնք նախատեսվում է ավարտել 2016թ. սեպտեմբերին:

Նախարար Չախարյանն անդրադառնալով Հայաստանի Հանրապետության եւ Վերակառուցման եւ զարգացման միջազգային բանկի միջև ստորագրված համաձայնագրին, նշել է, որ 8.55 միլիոն ԱՄՆ դոլար դրամաշնորհի շրջանակներում «Երկրագործային հետախուզական հորատման ծրագրի» իրականացման նպատակով մեկնարկել են մերձատար ճանապարհի եւ հորատման հարթակի շինարարական աշխատանքները, որոնք ընթանում են ըստ ընդունված ժամանակացույցի: Նեղ հորատանցքերի փորման համար հայտարարվել է մրցույթ: Վարչապետ Հովիկ Աբրահամյանը դրական է գնահատել նախարարության կատարած աշխատանքը, կարելու էր տարբեր ծրագրերի արդյունավետ իրականացումը եւ հորդորել հետևողական լինել ոլորտում ամկա խնդիրների լուծմանը:

## Սեյրան Օհանյանն այցելել է գոհված եզդի զինձառայողի ընտանիքին



Փետրվարի 18-ը եզդիական տոնացույցում նշվում է որպես «Հարության» տոն: Եզդի ժողովրդի տոնի կապակցությամբ ՀՀ պաշտպանության նախարար Սեյրան Օհանյանը այցելեց Արագածոտնի մարզի Ալազյազ գյուղ, որտեղ բնակվում է 2015թվականի դեկտեմբերի 18-ին հերոսաբար գոհված ժամկետային զինձառայող Սիդար Ալոյանի ընտանիքը:

ՊՆ մամուլի ծառայությունից հայտնում են, թե, արժևորելով «Արիության համար» մեդալի ասպետի սիրանքը եւ իր խորին երախտագիտությունը հայտնելով քաջարի մարտիկին դաստիարակած ընտանիքի անդամներին, պաշտպանության նախարարն ընդգծեց, որ հայ եւ եզդի ժողովուրդների եղբայրությունը եւ համագործակցությունը դարերի պատմություն ունի եւ այդ եղբայրության լավագույն դրսևորումն այսօր՝ հայրենյաց սահմանների պաշտպանության ժամանակ հայ եւ եզդի

զինձառայողների ցուցաբերած արիությունն ու անձնվիրությունն են:



Ծնորհակալություն հայտնելով պաշտպանության նախարարին այցելության համար եւ ընգծելով, որ զավակի կորուստը խոր վիշտ է պատճառել իրենց՝ Ալոյանների ընտանիքի անդամները հավաստիացրեցին, որ պաշտպանական գերատեսչության ղեկավարի նմանաբնույթ այցելությունները սիրով եւ մխիթարում են:



Սեյրան Օհանյանը հավաստիացրեց գոհված զինձառայողի հարազատներին, որ առաջիկայում պաշտպանության նախարարությունը կանի հնարավոր ամեն ինչ, Ալազյազ գյուղում Սիդար Ալոյանի հիշատակը հավերժացնելու համար:

## 2016թ. սեպտեմբերին սպասվում է Հռոմի Պապի այցը Հայաստան



2016թ. սեպտեմբերին սպասվում է Հռոմի Սրբազան Քահանայապետ Ֆրանցիսկոս Պապի այցը Մայր Աթոռ Ս. Էջմիածին: Այդ մասին հաղորդվել է Գերագույն հոգևոր խորհրդի ժողովի ընթացքում:

Ընդլայնված կազմով ժողովը ընթանում է փետրվարի 16-20-ը:

ԳՀԽ անդամներին տեղեկացվել է, որ 2016թ. սեպտեմբերին սպասվում է Հռոմի Սրբազան Քահանայապետ Ֆրանցիսկոս Պապի այցը Մայր Աթոռ Ս. Էջմիածին եւ այցի

կազմակերպման կապակցությամբ Մայր Աթոռը կապի մեջ է Վատիկանի հետ:

Քննարկումների արդյունքում որոշվել է նախապատրաստական աշխատանքների ժամանակատարությունից ելնելով՝ Ազգային-եկեղեցական ժողովի գումարումը նախատեսել 2017 թվականին, իսկ 2016 թվականի հոկտեմբերին հրավիրել Եկեղեցական-ներկայացուցչական ժողով:

Ժողովին Գերագույն հոգևոր խորհուրդը լսել է նաև Հայոց Յեղասպանության սուրբ նահատակների ամենամյա հիշատակության ծիսական կանոնի խմբագրման հանձնախմբի համակարգող Բագրատ Եպիսկոպոս Գալստանյանի զեկույցը՝ Յեղասպանության նահատակների ծիսական կանոնի եւ սպիրիտի 24-ին կատարվելիք Բարեխոսական կարգի մասին:

## Մահացել պատմաբան, աղբյուրագետ Պետրոս Հովհաննիսյանը



Այսօր առավոտյան վախճանվել պատմաբան, աղբյուրագետ Պետրոս Հովհաննիսյանը:

Պետրոս Հովհաննիսյան Հովհաննիսյանը ծնվել է 1944 թ. հունիսի 22-ին Լեւինական (այժմ Գյումրի) քաղաքում՝ Հայոց Մեծ եղեռնից մազապուրծ փրկված երգնկացի Հովհաննեսի բազմանդամ ընտանիքում: Միջնակարգ կրթությունն ստացել է նույն քաղաքի Վլ. Մայակովսկու անվան թիվ 5 միջնակարգ դպրոցում, որն ավարտելուց հետո Պ.Հովհաննիսյանը՝ հաջողությամբ հանձնելով ընդունելության քննությունները, ընդունվում է ԵՊՀ պատմության ֆակուլտետ՝ ընտրելով հայոց պատմության ուսումնասիրության բնագավառը: Ուսումնասիրության շրջանում նա գորակոչվում է բանակ եւ՝ շուրջ 3 տարի խորհրդային բանակում ծառայելուց հետո, շարունակում է ուսումը ու 1970 թ. ավարտում ԵՊՀ պատմության ֆակուլտետը: Նույն թվականին նա ընդունվում է ասպիրանտուրա Հայոց պատմության ամբիոնի գծով եւ 1976 թ. հաջողությամբ պաշտպանում թեկնածուական ատենախոսությունը՝ պրոֆ. Ս.Պողոսյանի ղեկավարությամբ: Այնուհետեւ աշխատում է Հայոց պատմության ամբիոնում որպես գիտաշխատող, կաբինետի վարիչ, ավագ դասախոս, սպա՝ դոցենտ, այժմ պրոֆեսոր: 2013 թ. մինչ օրս ղեկավարում էր ԵՊՀ Հայոց պատմության ամբիոնի աշխատանքները:

Ընթերցող հասարակության մեծ մասին հայտնի են Պ.Հովհաննիսյանի հայ թագավորների, կաթողիկոսների, հասարակական-պետական նշանավոր գործիչների մասին ՀՀ հանրագիտարանների եւ «Բրիտանոյա Հայաստան» հանրագիտարանի բազմաթիվ հոդվածները: Նա մի շարք գիտական խորհուրդների անդամ էր եւ գիտական բազմաթիվ զեկույցումներով հանդես է եկել

հանրապետական ու միջազգային մի շարք գիտաժողովներում:

Իր գիտամանկավարժական գործունեության համար 2009 թվականին Հանրապետության նախագահի հրամանագրով Պ.Հ.Հովհաննիսյանին շնորհվել է Հայաստանի Հանրապետության վաստակավոր մանկավարժի պատվավոր կոչում:

## Դաշնակցական նախարարները նշանակվեցին. Աշոտյանը ազատվեց

Նախագահ Սերժ Սարգսյանն արդեն նշանակումներ է կատարել մի քանի նախարարություններում, հրամանագրով կիսել Տարածքային կառավարման եւ արտակարգ իրավիճակների նախարարությունը:

Ղեկավարվելով 2005 թվականի փոփոխություններով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 85-րդ հոդվածի 6-րդ մասով, հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետության կառավարության կառուցվածքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածի 1-ին մասը եւ Հայաստանի Հանրապետության Նախագահի 2007 թվականի հուլիսի 18-ի ՆՀ-174-Ն հրամանագրով հաստատված՝ Հայաստանի Հանրապետության կառավարության եւ նրան ենթակա պետական կառավարման այլ մարմինների գործունեության կազմակերպման կարգի 7-րդ կետը՝ Սարգսյանը որոշում է կայացրել Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման եւ արտակարգ իրավիճակների նախարարությունը վերակազմակերպել՝

- Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման եւ զարգացման նախարարության,
- Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության:

Արմեն Երիցյանը ազատվել է ՏԿԱԻ նախարարի պաշտոնից եւ նշանակվել է արտակարգ իրավիճակների նախարար:

Արմեն Աշոտյանը ազատվել է կրթության եւ գիտության նախարարի պաշտոնից, նշանակվել է դաշնակցական Լեւոն Մկրտչյանը:

Կարեն Ճճմարիտյանը ազատվել է Էկոնոմիկայի նախարարի պաշտոնից, նշանակվել է Արծվիկ Մինասյանը:

Դավիթ Լոքյանը նշանակվել է տարածքային կառավարման եւ զարգացման նախարար:

## Դաշնակցությունն ամբողջական պատասխանատվություն ստանձնեց երկրի վիճակի համար



ՀՅԴ-ն ընդհանուր քաղաքական պատասխանատվություն է ստանձնում երկրի կառավարման բոլոր ոլորտների համար: Այդ մասին նախագահական նստավայրում «Քաղաքական

համագործակցության մասին համաձայնագիր» անվանումը կրող հուշագրի ստորագրումից հետո կայացած ճեպագրություն ասել է ՀՅԴ-ական պատգամավոր Աղվան Վարդանյանը:

Նրա խոսքով, հուշագիրը երկար աշխատված հիմնարար փաստաթուղթ է: «Այն ինչ-որ առումով ճանապարհային քարտեզ է, որում դրված են երկու ուժերի նպատակները, նաև նախագահի վերջին ելույթի դրույթները»,- ասել է Վարդանյանը: Նա նաև համոզված է, թե կոալիցիա կազմելով ՀՅԴ-ի նկատմամբ ժողովրդի վստահությունը չի նվազի:

«Այս փաստաթղթով համատեղելով քաղաքական ուժերի հնարավորությունները, կարողանալու ենք մեր երկրում որակական, արմատական ուղի բացել: Տա Աստված, եւ այդքան կամք ունենք, որ այս փաստաթղթից բխող անելիքները կարողանանք կյանքի կոչել: Այլեւս ընդհանուր պատասխանատվություն ենք ստանձնում, պատասխանատվությունը բոլոր ոլորտներին է վերաբերում»,- նշել է նա: Աղվան Վարդանյանը հերքել է տեղեկությունները, թե դրսի դաշնակցականները դժգոհ են կոալիցիա կազմելու որոշումից:

Իսկ ԿԳ նախարարի պաշտոնին հրաժեշտ տվող, ՀՀ փոխնախագահ Արմեն Աշոտյանը հայտարարել է, թե հուշագրով քաղաքական նոր մշակույթի հիմք է դրվում:

Լրագրողների դիտարկմանը, թե արդյոք հարիր է իշխանությանը, որ քաղաքական ակտիվիստների նկատմամբ հետապնդումներ են ընթանում՝ Աղվան Վարդանյանը խուսափողական պատասխան տվեց. «Գնահատականներին հիմա անդրադառնալու ժամանակը չէ, բայց մեր փաստաթղթում նաև այս խնդիրներին անդրադառնալու ենք»: Մասնավորապես, խոսքը վերաբերում էր Վարդգես Գասպարիի դեպքին, սակայն ՀՅԴ ներկայացուցիչը հրաժարվեց կոնկրետ պատասխան տալ:

Նշենք, որ Էկոնոմիկայի նախարար կնշանակվի Արծվիկ Մինասյանը, ԿԳ նախարար՝ Լեւոն Մկրտչյանը, իսկ Տարածքային կառավարման եւ զարգացման նախարար՝ Դավիթ Լոքյանը: ՀՅԴ-ին կտրվեն նաև Արագածոտնի և Շիրակի մարզպետների պաշտոնները. մասնավորապես, Արագածոտնի մարզպետ կնշանակվի Գաբրիել Գյոզայանը, իսկ Շիրակի մարզպետ՝ Նովսեփ Միմոնյանը:

### Հայ-իրանական սահմանին կարող է ազգային բարեկամության արգելոց հիմնվել



Վերջին տարիներին Իրանի եւ Հայաստանի միջև փոխգործակցությունը բնապահպանության ոլորտում ամրապնդվել է: Այս մասին, փետրվարի 22-ին Իրանում ՀՀ դեսպան Արտաշես Թումանյանի հետ հանդիպման ժամանակ նշել է Իրանի փոխնախագահ, Իրանի շրջակա միջավայրի պահպանության կազմակերպության ղեկավար տիկին Մասումե Էրթեքարը:

ԱԳՆ-ից հայտնում են, որ դեսպան Թումանյանը նշել է, որ Հայաստանի եւ Իրանի միջև առկա է շրջակա միջավայրի բնագավառում համագործակցության դրական փորձ՝ ինչպես երկկողմ, այնպես էլ բազմակողմ ձեւաչափով:

Փոխնախագահ Էրթեքարը գոհունակությամբ նշել է, որ վերջին տարիներին Իրանի եւ Հայաստանի միջև փոխգործակցությունը բնապահպանության ոլորտում ամրապնդվել է, մասնավորապես, ստորագրվել է համագործակցության վերաբերյալ փոխըմբռնման հուշագիր:

Հայ-իրանական հարաբերությունների զարգացման համատեքստում երկուստեք ընդգծվել է, որ Իրանի նկատմամբ պատժամիջոցների վերացումը նոր հեռանկարներ է բացում երկկողմ համագործակցության զարգացման ու ամրապնդման տեսանկյունից, այդ թվում՝ բնապահպանության ոլորտում:

Չրուցակիցների հանգամանակից քննարկելի են Արաքս գետի աղոտովածության խնդիրը, հայ-իրանական սահմանին ազգային բարեկամության արգելոցի հիմնման, Էկոտուրիզմի զարգացման, որոշ կենդանատեսակների պահպանության համար ծրագրերի մշակման հարցերը:

### Արխագիան Լեռնային Ղարաբաղի հետ անվիզա այցելությունների համաձայնագիր է պատրաստում



Արխագիայի ԱԳՆ-ն պատրաստվում է Մերձդնեստրի եւ Լեռնային Ղարաբաղի հետ անվիզա այցելությունների մասին համաձայնություն ստորագրել: Այս մասին հայտնել է Արխագիայի փոխարտգործնախարար Կան Տանիան:

«Նախարար Վյաչեսլավ Չիրիկբան Արխագիայի ԱԳՆ միջազգային-իրավական բաժնին հանձնարարել է նախապատրաստել բարեկամ Մերձդնեստրի Մոլդովական Հանրապետության եւ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հետ փոխադարձ անվիզա այցելությունների մասին համաձայնագրերի նախագիծը»,- ՏԱՄՍ-ին հայտնել է Տանիան: Նա նշել է, որ դա պայմանավորված է 2016թ. ապրիլի 1-ից ուժի մեջ մտնող «Արխագիայի Հանրապետությունից ելքի եւ Արխագիայի Հանրապետություն մուտքի մասին» օրենքը ուժի մեջ մտնելու հետ:

Օրենքի համաձայն՝ այսուհետ առանց վիզայի Արխագիա կարող են մուտք գործել միայն այն երկրների քաղաքացիները, որոնք ճանաչել են նրա անկախությունը եւ փոխադարձ անվիզա այցերի մասին համաձայնագրեր ունեն:

Փոխնախարարը հիշեցրել է, որ Արխագիայում վիզայի՜նք եժիմը գործում է 90-ական թթ. կեսերից, սակայն վերաբերում էր միայն հեռավոր արտասահմանի



քաղաքացիներին: Նախքան օրենքն ընդունելը, վիզային ռեժիմը կարգավորվում էր հանրապետության ԱԳՆ ներքին դրույթներով, Կառավարության որոշումներով եւ նախագահի հրամանով:

«Ապրիլի 1-ից ուժի մեջ մտնող օրենքը կվերաբերի այն քաղաքացիներին, որոնց երկրների հետ Աբխազիան փոխադարձ անվիզա այցերի մասին համաձայնագրեր չունի: Այս պահին վավերացված համաձայնագրեր կան Ռուսաստանի եւ Նիկարագուայի հետ: Հարավային Օսիայի հետ նման համաձայնագրի ստորագրումը վավերացման փուլում է», - ասել է Տանիան:

## Ստեփանակերտ. Սարսանգի ՀԷԿ-ի աշխատանքի ռեժիմը վերջին ամիսների ընթացքում չի փոխվել



Ադրբեջանական կողմը հերթական ապատեղեկատվությունն է տարածում՝ իրենց սխալը կամ ձախողությունը վերագրելով չար հայերի դավադիր ջրին: Այս մասին ասել է ԼՂՀ վարչապետի մամուլի խոսնակ Արտակ Բեգլարյանը՝ թղթակցի խնդրանքով մեկնաբանելով ադրբեջանական լրատվամիջոցներում հայտնված տեղեկություններն այն մասին, թե իբր Սարսանգի ջրամբարից բաց թողած ջրի պատճառով փլուզվել է կամուրջը:

«Իրականում Սարսանգի ՀԷԿ-ի գործունեության ռեժիմը ոչ մի փոփոխություն չի կրել վերջին ամիսներին, եւ ամեն օր Սարսանգից բաց է թողնվում վայրկյանում միջինը 20 խորանարդ մետր ջուր, որը շատ հեռու է կամուրջ քանդելու ծավալից: Ավելին՝ հասարակ տրամաբանությունը հուշում է, որ եթե նույնիսկ մենք մեծ ծավալի ջուր բաց թողնենք ինչ-ինչ նպատակներով, ապա այն կվնասի մեր ՀԷԿ-ի սաքքավորումները, որոնք նախատեսված են նշաձս միջին ծավալի համար: Հետեւաբար, ուղղակի բացառվում է այդ սցենարը, թող պատճառը որոնեն իրենց մոտ, եթե, իհարկե, այդ կամուրջը քանդվել է իրականում:

Ի դեպ, այս տեղեկատվությամբ ադրբեջանական կողմը եւս մեկ անգամ խոստովանեց, որ Արցախը, այնուամենայնիվ, Սարսանգի ջրի ելքն ամբողջովին չի փակում եւ տարվա ընթացքում հսկայական ծավալի ջուր է տրամադրում իրենց: Իսկ եթե ամառվա սեզոնին էլ են ցանկանում ջուր ունենալ, ապա Խորհուրդ կտայի ողջախոհ գտնվել եւ համագործակցել Արցախի Հանրապետության հետ, ինչը փոխշահավետ է երկու կողմերի բնակիչների համար: Հիշեցնենք, որ եթե Ադրբեջանի գյուղացիները տարեկան 8-9 ամիս ջուր են ստանում Սարսանգի ջրամբարից, ապա մեր գյուղացիները նույնիսկ մեկ օր չեն ստանում, քանի որ Ադրբեջանը փակ է պահում ջրանցքի՝ իրենց տարածքում գտնվող հանգույցը», - ասել է Արտակ Բեգլարյանը:

Հիշեցնենք, որ ԱՊԱ գործակալությունը հայտնել էր, թե Այրիչա գյուղում Սարսանգի ջրամբարից ջրի բացթողման հետեւանքով գետի ջրի մակարդակի բարձրացման պատճառով կամուրջ է փլուզվել:

## Երեւանում մեկնարկել է ընդդիմադիր 6 ուժերի համատեղ հավաք-երթը՝ ի հիշատակ Մարտի 1-ի զոհերի

Երեւանում մեկնարկել է ընդդիմադիր 6 ուժերի համատեղ հավաք-երթը՝ ի հիշատակ 2008-ի մարտի 1-ի զոհերի:

Նշենք, որ նախապես համատեղ հավաք-երթի մասին հայտարարել էին ՀԱԿ-ը, «Նոր Հայաստան» ու ՀԺԿ-ն, սակայն ավելի ուշ համատեղ հայտարարությամբ նրանց են միացել նաեւ Պարույր Հայրիկյանի ղեկավարած «Ազգային ինքնորոշում» միավորումը», Աշոտ Մանուչարյանի «Հայաստան» նախաձեռնությունն ու «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցությունը, որի ղեկավար անդամ է ԱԺ պատգամավոր Նիկոլ Փաշինյանը:

Միասնական հավաք-երթի կարգախոսն է «Ընդդեմ պետական ահաբեկչության»: Երթը հսկում են ոստիկաններ, որոնք մեխակներ ունեն ձեռքներին:

Հիշեցնենք, որ 2008թ. փետրվարի 18-ի նախագահական ընտրություններից հետո ՀՀ առաջին նախագահ Լևոն Տեր-Պետրոսյանի կողմնակիցները հավաքվել էին Ազատության հրապարակում եւ պահանջում էին ընտրությունների վերանայում: Նրանք 10 օր շարունակ շուրջօրյա հանրահավաքներ էին անցկացնում Ազատության հրապարակում: Մարտի 1-ի առավոտյան ոստիկանությունը ուժով ցրեց Ազատության հրապարակում հավաքվածներին, իսկ նույն օրը երեկոյան իշխանությունները հրազեն կիրառեցին անգնեց ցուցարարների դեմ, որի հետեւանքով զոհվեց 10 քաղաքացի, այդ թվում երկու ոստիկան: Մինչ օրս 10 զոհերի համար ոչ ոք պատասխանատվություն չի կրել:



## Հայկական նոր ավիափոխադրողն ապրիլից չվերթներ կիրականացնի



Հայաստանում արդեն ապրիլի սկզբին հայկական նոր ավիափոխադրող կհայտնվի:

Լուրերի թղթակցի հետ զրույցում Հայաստանի քաղաքացիայի վարչության մամուլի խոսնակ Ռուբեն Գրղգեյանը հայտնեց, որ օդանավ շահագործողի վկայական

ստացած «Ավիակոմպանիա Արմենիա»-ն շուտով կստանա նաև ռեգուլյար կանոնավոր կոմերցիոն չվերթ իրականացնելու թույլտվությունը:

«Այս գործընթացը կտեւի մոտ մեկ ամիս, որից հետո ավիափոխադրողը կսկսի արդեն չվերթներ իրականացնել», - ասաց վարչության մամուլի խոսնակը:

Նշենք, որ «Ավիակոմպանիա Արմենիա»-ի հիմնադիրը «Georgian Airways» ընկերության նախագահ Թամազ Գաիաշվիլին է, բաժնետոմսեր ունեն նաև Աշոտ Թորոսյանը եւ Ռոբերտ Օգանեսյանը:

Հիշեցնենք, որ հայկական միակ ավիափոխադրող «Էյր Արմենիան» սնանկացել է: Ընկերությունն այս պահին առողջացման ծրագիր է ներկայացրել: Դեռևս հայտնի չէ՝ երբ «Էյր Արմենիան» նորից չվերթներ կիրականացնի:

## Արևմտյան Հայաստան

### Թուրքիայի Սվասում բարեկարգել են հայկական գերեզմանոցը



Թուրքիայի Սվաս նահանգում գտնվող հայկական գերեզմանոցում բարեկարգման աշխատանքներ են կատարվել:

Թուրքական Anadolu գործակալության փոխանցմամբ՝ Թուրքիայի Սվաս նահանգի աշխատանքների կատարման վարչության կողմից տարածված հայտարարության մեջ ասվել է, թե Սվասի 5-րդ մոտոհրաձգային բրիգադի տարածքում գտնվող հայկական գերեզմանոցը կատարված աշխատանքից հետո մաքրվել ու ավելի բարեկարգ տեսքի է բերվել:

«Մեր համար մուսուլման կամ ոչ մուսուլման չկա: Մեր հարեւան հայերի գերեզմանների պահպանության համար ամեն անհրաժեշտ բան անելու ենք», - ասվել է հայտարարության մեջ:

### Թուրքիայի հայ կին պատգամավորը Դիարբեքիրին Տիգրանակերտ է ասել թուրքերն անհանգստացել են

Թուրքիայի ընդդիմադիր «Ժողովրդա-հանրապետական» (CHP) կուսակցության հայ կին պատգամավոր Մելինա Դողանի ֆեյսբուքյան գրառումը խիստ անհանգստացրել է թուրք ազգայնականներին:

«Ժողովրդա-հանրապետական» կուսակցության Ստամբուլի կառույցի հետ Դիարբեքիր այցելած Մելինա Դողանը ֆեյսբուքյան էջում այցի վերաբերյալ

տպավորություններ էր գրել, որում Դիարբեքիրը նաև որպես Տիգրանակերտ էր ներկայացրել:



Այս գրառումը անհանգստացրել է թուրքական ազգայնականներին, ովքեր Մելինա Դողանի հայտարարության դեմ հողվածներ են պատվիրել տարբեր կայքերում:

### Թուրքիայում հողվածների նոր ժողովածու է լույս տեսել Հայոց ցեղասպանության թեմայով



Թուրքիայում «Իլթիշիմ» հրատարակչությունը «Հայոց ցեղասպանությունը 100 տարի անց» վերնագրի ներքո լույս է ընծայել այն գեկուցումների ժողովածուն, որոնք ներկայացվել են 2015 թ. Փարիզում:

Ինչպես տեղեկացնում է Akunq.net-ը, ժողովածուում ընդգրկվել են ցեղասպանագիտության ոլորտի լավագույն մասնագետների գեկուցումները, որոնք ոչ միայն մեկնաբանում են Հայոց ցեղասպանությունը, այլ անդրադառնում են նաև օսմանյան տարածքներում բնակված մյուս փոքրամասնությունների նկատմամբ տարված բռնատիրական քաղաքականությանը, Թուրքիայի ժխտողական քաղաքականությանը, իրավագիտական հարցերի և այլ հարակից թեմաների:

### Թալեաթի անձնական գեկույցը հայկական կոտորածների մասին. նա փորձում է արդարանալ

Թալեաթ փաշան, իր հուշերում, ինչպես Օրբի Հերբերտի հետ հարցազրույցում, փորձում է արդարացնել իրեն՝ Հայոց ցեղասպանության համար մեղադրելով բոլորին՝ հայերին, ռուսներին, նույնիսկ թուրքերին: Այս մասին իր հողվածում գրում է «Քալիֆորնիա Կուրիեր» թերթի հրատարակիչ և խմբագիր Հարութ Սասունյանը:

Ստորև ներկայացնում ենք հողվածը. «Նախորդ շաբաթվա իմ հողվածում տեղեկացրել էի, որ Թալեաթ փաշան՝ Հայոց ցեղասպանության գլխավոր

կազմակերպիչը, 1921 թվականին բրիտանացի հետախույզ Օրբի Հերբերտին տված հարցազրույցում ասել էր, որ «հուշագիր էր գրել հայկական կոտորածների մասին»:



Այժմ կցանկանայի ներկայացնել համառոտ հատվածներ Թալեաթի ծավալուն զեկույցից, որը 1921 թ. նոյեմբերին հրատարակվել է «Նյու Յորք Թայմս»-ի կողմից հրատարակվող «Քարընթ հիսթորի» (Current History) ամսագրում «Թալեաթ փաշայի հետմահու հուշերը» վերնագրով, եւ հետեւյալ ենթավերնագրով. «Նախկին Մեծ վեզիրի անձնական զեկույցը՝ գրված նրա սպանությունից կարճ ժամանակ առաջ, թե՛ ինչու եւ ինչպես Թուրքիան մտավ պատերազմի մեջ. Գաղտնի դաշինք, որը նախորդեց հակամարտությանը. Հայկական կոտորածների պատճառները՝ ներկայացված դրանք պատվիրած մարդու կողմից»:

«Քարընթ հիսթորի»-ի խմբագիրները ներածական ծանոթության մեջ բացատրում են, թե ինչպես են ձեռք բերել այս բացահայտող զեկույցի օրինակը. «... Թալեաթի մահվանից հետո, այս ձեռագիրը անցավ Գերմանիայում մնացած նրա կնոջը. նա դեռ չէր հրապարակել ամբողջական զեկույցը, սակայն նրա ամուսնուն գնդակահարողի ազատ արձակումից հետո, նա թույլատրեց Կոստանդնուպոլսում հրատարակվող լիբերալ թուրքական «Վաքիթ» թերթի Փարիզի թղթակցին հրատարակել դրա առավել հետաքրքիր հատվածները: «Քարընթ հիսթորի»-ի համար դրանք թուրքերենից թարգմանեց բնիկ պոլսեցի Մ. Չեքերիան: Դրանք մոտ հիսուն էջեր էին բնօրինակ ձեռագրից, որի առաջին նախադասությունը՝ «Ես չեմ ասում ամբողջ ճշմարտությունը, սակայն այն ամենը, ինչ ասում եմ՝ ճշմարիտ է», մեծ ցնցում առաջացրեց Թուրքիայում»:

Թալեաթը, իր հուշերում, ինչպես Օրբի Հերբերտի հետ հարցազրույցում, փորձում է արդարացնել իրեն՝ Հայոց ցեղասպանության համար մեղադրելով բոլորին՝ հայերին, ռուսներին, նույնիսկ թուրքերին: Նա չի ժխտում «հայերի, իսկ որոշ բնակավայրերում նաեւ հույների եւ Սիրիայում որոշ արաբների տեղահանությունները», սակայն պնդում է, որ դրանց մասին հարորդումները «խիստ չափազանցված էին»: Այս Թալեաթը հավելում է. «Սա ասելով, ես ամենեւին էլ միտք չունեմ ժխտելու փաստերը: Միայն ցանկանում եմ վերացնել չափազանցությունները եւ փաստերը շարադրել այնպես, ինչպես դրանք տեղի են ունեցել»:

Նախկին Մեծ վեզիրը խոստովանում է. «Ես ընդունում եմ, որ մենք բազմաթիվ հայերի տեղահանել ենք մեր արեւելյան նահանգներից, բայց այս հարցում մենք երբեք չենք գործել նախապես մշակված ծրագրով: Այս գործողությունների պատասխանատվությունը ընկնում է առաջին հերթին հենց տեղահանված ժողովրդի վրա: Մեր արեւելյան շրջանները ձեռք գցելու նպատակով, Ռուսաստանը զինեց այս շրջանների հայ բնակչությանը եւ նշված տարածքում կազմակերպեց ուժեղ հայկական հրոսակային ուժեր»:

Փորձելով վերականգնել իր արատավորված անունը՝ Թալեաթն ընդունում է թուրքական բռնություններն ընդդեմ հայերի. «Ես ընդունում եմ, որ տեղահանությունը ամենուր օրինական կարգով չի իրականացվել: Որոշ տեղերում

անօրինական արարքներ են կատարվել... Մի շարք պաշտոնյաներ չարաշահել են իրենց լիազորությունները, եւ շատ տեղերում մարդիկ իրենց ձեռքն են վերցրել կանխարգելիչ միջոցառումները եւ հալածել անմեղ մարդկանց: Խոստովանում եմ»:

Շարունակելով իր դեմքը փրկելու հոետությունը՝ Թալեաթը գիշում է. «Խոստովանում եմ նաեւ, որ կառավարության պարտականությունն էր կանխել այս բռնություններն ու վայրագությունները, կամ առնվազն բռնել եւ խստորեն պատժել մեղավորներին: Շատ տեղերում, որտեղ տեղահանված մարդկանց գույքը եւ ունեցվածքը թալանված էր, իսկ հայերը՝ հալածված, մենք ձեռքբերակեցինք մեղավորներին եւ պատժեցինք ըստ օրենքի: Խոստովանում եմ, սակայն, որ պետք է ավելի խստորեն վարվեինք, իրականացնեինք ընդհանուր հետաքննություն՝ բոլոր սադրիչներին ու թալանիչներին բացահայտելու եւ խստորեն պատժելու համար: Բայց չէինք կարող այդպես անել: Չնայած շատ մեղավորների պատժեցինք, սակայն նրանց մեծ մասը մնաց անպատիժ»:

Թալեաթը շարունակում է արդարացումներ գտնել հայկական կոտորածների համար հետապնդման չենթարկված ոճրագործների համար, որոնք «անհեռատես եւ մոլեռանդ էին, սակայն անկեղծ էին իրենց համոզմունքների մեջ: Հասարակությունը խրախուսում էր նրանց, եւ նրանք իրենց հետեւում ունեին աջակիցների մի սովոր բանակ: Նրանք մեծաթիվ էին եւ ուժեղ: Նրանց բացահայտ եւ անհապաղ պատիժը կարող էր դժգոհության մեծ ալիք առաջացնել մարդկանց շրջանում, որոնք հավանություն էին տալիս նրանց գործողություններին: Այս բոլոր սադրիչներին ձեռքբերակելու եւ պատժելու փորձը կարող էր անհիշխանության պատճառ դառնալ Անատոլիայում հենց այն ժամանակ, երբ մենք միասնության խիստ կարիք ունեինք»:

Հանուն ճշմարտության պետք է նշել, որ Թալեաթի պնդումները, թե իբր հայերը Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին թիկունքից հարվածել են Թուրքիային, լիովին կեղծ են: Թուրքիայի ռազմական նախարար, օսմանյան զինված ուժերի գլխավոր հրամանատար Էնվեր փաշան, Կոնիայի եպիսկոպոսին հղած նամակում, բարձր է գնահատել թուրքահայ զինվորների քաջությունը ռուսական բանակի դեմ պայքարում 1914-1915 թթ. ձմռանը:

Ղետք չէ զարմանալ, որ Թալեաթի այն պնդումը, թե իր կառավարությունը դաժան գործողություններ կձեռնարկել հայերի դեմ նույնիսկ «խաղաղության ժամանակ», վերահաստատում է թուրքական վաղեմի ցեղասպանական գործելակերպը, ինչպես նախկինում կիրառվել է համիդյան եւ Ադանայի հայկական ջարդերի ժամանակ, երբ պատերազմներ չկային:

*Թարգմանությունը՝ Ռուզաննա Ավագյանի*

## Օսմանյան կայսրությունում հայկական եւ հունական ունեցվածքի թուրքացումը. Նոր գիրք Թուրքիայում

Թուրքական «Էվրենսեթ» հրատարակությունը հրատարակել է երկու հատորից բաղկացած՝ Նեւգաթ Օնարանի նոր գիրքը, որում քննության է ենթարկվում թուրքական ազգայնականության տնտեսական քաղաքականությունը: Ինչպես տեղեկացնում է Akunq.net-ը, գրքում ուսումնասիրվում է Առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ Միություն եւ առաջադիմություն կուսակցության կառավարության «ուրիշների» ունեցվածքի լուծարման



հիմքում ընկած տնտեսական քաղաքականության պատմությունը՝ սկսած 1915 թ. մինչև մեր օրերը:



Հետազոտության մեջ շեշտվում է, որ 1920-ական թթ. հանրապետության «ազգային քաղաքականությունը» հիմնվել է Միություն և առաջադիմություն կուսակցության տնտեսական քաղաքականության վրա և հետևաբար հանդիսանում է այդ քաղաքականության բնական շարունակությունը: Միաժամանակ այս երկու գրքում վերլուծության է ենթարկվում, թե Օսմանյան կայսրության վերջին շրջանում և Հանրապետական Թուրքիայի առաջին տարիներին ինչպես է պետության միջոցով յուրացվել «ուրիշների» գույքը և կուտակվել թուրք-իսլամական կապիտալը»: Օնարանի աշխատությունն ուսումնասիրում է թուրքական ազգայնականության «արյունոտ» տնտեսական քաղաքականությունը և դրա ազդեցությունը այդ հողերի վրա բնակվող ոչ թուրքերի և մուսուլմանների վրա: Գրքում Օնարանն օգտագործել է Թուրքիայի կառավարությանը կից օսմանյան և հանրապետական արխիվային փաստաթղթերը և «Ակոս» ու «Տնումհուրիյեթ» թերթերի արխիվային նյութերը: Ուսումնասիրել է տնտեսական քաղաքականության մասին օրենքն ու դրույթները, ինչպես նաև՝ օրենքի վերաբերյալ խորհրդարանում կատարված քննարկումները:

## Վանի պատմական Խոշարի բերդում 250 տարի առաջ պատրաստված պանիր են գտել



Վան նահանգի Խոշարի բերդի վերանորոգման աշխատանքների ընթացքում 4 սափոր պանիր են հայտնաբերել: Թուրքական Orghaber կայքի փոխանցմամբ՝ Վանի Հարյուրամյա համալսարանի արվեստի պատմության ֆակուլտետի ղեկանի գլխավորությամբ Արարատյան (Ուրարտու) թագավորության ժամանակ կառուցված Խոշարի բերդում իրականացվող վերանորոգման աշխատանքների ժամանակ հայտնաբերվել է 4 սափոր պանիր:

Ուսումնասիրության ժամանակ պարզվել է, որ պանիրներն ունեն 250-ամյա պատմություն: Նշվում է, որ պանիրները եղել են մինչև հիմա հայտնի «Վանի ժածիկ» տեսակը:

## Թուրքիայի մեջլիսը հայ պատգամավորի համար հայերենով այցեքարտ է թողարկել



Թուրքիայի խորհրդարանի քրդական «Ժողովուրդների դեմոկրատական» (HDP) կուսակցության հայ պատգամավոր Կարո Փայլանը հայտարարել է, որ խորհրդարանի տպագրատունն իրեն հայերենով այցեքարտ է հատկացրել: Թուրքական Cumhuriyet-ի փոխանցմամբ՝ հայ պատգամավորը ներկայացրել է հայերենով իր նոր այցեքարտը՝ ավելացնելով. «Աշխարհում մայրենի լեզվի օրվա հետ համահունչ եղավ: Տարոսը մյուս լեզուներին»: Նշենք, որ ավելի վաղ թուրքական խորհրդարանը մերժել էր քրդերենով այցեքարտ տրամադրել:



## Թուրքիայում «սեփականատիրոջ» կողմից հայկական եկեղեցի է վաճառքի հանվել



Թուրքիայի ինտերնետային կայքերից մեկով վաճառքի հանվել Բուրսայում կառուցված 300-ամյա հայկական եկեղեցի:

Ինչպես տեղեկացնում է թուրքական Demokrathaber կայքը, Բուրսայի Սեթբաշը թաղամասում, որտեղ մինչ Հայոց ցեղասպանությունը մեծ թվով հայեր էին ապրում, գտնվող հայկական եկեղեցին «սեփականատիրոջ» կողմից 1,5 մլն դոլարով վաճառքի է հանվել:

Նշվում է, որ եկեղեցին 1986 թվականին գրանցվել է որպես պատմական արժեք:

Մինչ 1915-ը Բուրսայում եւ նրա շուրջ եղել են 17 հայկական եկեղեցիներ, որոնց մեծ մասը կամ քանդվել են, կամ այլ նպատակով են օգտագործվում:

## Միջուկ

### Մահացել է եգիպտական բեմի «հրաշամանուկ» հայուհին



Եգիպտոսում մահացել է եգիպտական կինոյի հայազգի աստղ, երգչուհի Ֆեյրուզը: Այս մասին հայտնում է եգիպտական Daily NEWS պարբերականը:


Պարբերականի հաղորդմամբ՝ 73-ամյա Ֆեյրուզն ուներ երիկամների եւ յարդի հետ կապված խնդիր եւ վերջին շրջանում նրա վիճակը վատթարացել էր:

Նշենք, որ դերասանուհին, որին անվանում էին «հրաշամանուկ», հայտնի էր երաժշտական ներկայացումներում իր դերերով: Նա 9 տարում խաղացել է 10 դեր, սակայն ամուսնանալուց հետո լքել է բեմը:

2001թ.-ին Ֆեյրուզը պարգևատրվել է Կահիրեի միջազգային կինոփառատոնի կողմից՝ եգիպտական կինոյում ունեցած ավանդի համար:

Հիշենք, որ Ֆեյրուզը՝ Փիրուզ Արթին Գալֆայանը, ծնվել է 1943թ.-ին Կահիրեում:

### Ստամբուլում կրկին տարեց հայ են սպանել



Ստամբուլի Ծիշի թաղամասում տարեց հայ զույգի տուն մտած հանցագործները տունը թալանելուց հետո զույգին կապել են մահացու «խոզի կապանքով» ու հեռացել:

Թուրքական Hurriyet-ի փոխանցմամբ՝ Ծիշիում տարեց հայ զույգի տանը մաքրությամբ զբաղվող աշխատակիցը հերթական այցի ժամանակ տեսնելով, որ տան դուռը բացող

չկա, զանգահարել է տարեց ամուսինների ազգականներին, ովքեր անմիջապես ոստիկանություն են հայտնել:

Դեպքի վայր մեկնած հրշեջները պատուհանից ներս են մտել եւ տեսել «խոզի կապանքով» կապված ամուսինների: Պարզվել է, որ կապված 85-ամյա ամուսինը խեղդվել է, իսկ 79-ամյա կինը ծանր վիճակում է գտնվում:

Հիվանդանոց տեղափոխված տարեց հայ կինը պատմել է, որ տունը թալանել ու իրենց կապել են 3 տղամարդ:

### Ղազախստանից հայուհին կայք է ստեղծել, որն օգնում է ամբողջ աշխարհի գիտնականներին



Գիտական աշխատանքներն այնքան թանկ են, որ դրանց համար երբեմն գումար չի կարողանում տրամադրել նույնիսկ Հարվարդի համալսարանը: Վերջերս 15 հազար գիտնականներ միացել են ստորագրահավաքին, որում կոչ է արվում բոլորտեղ Elsevier հրատարակությունը, քանի որ այն գիտական աշխատանքները վաճառում է աստղաբաշխական գումարով:

Հրատարակության եկամուտն ավելի քան մեկ միլիարդ դոլար է, մինչդեռ գիտնականներն իրենց աշխատանքների հրատարակումից ոչինչ չեն ստանում: Երբեմն նրանց հասանելի չեն անգամ սեփական աշխատանքները, քանի որ իրենց համալսարանները բաժանորդագրված չեն Elsevier-ին: Որպեսզի Cognition ամսագիրը գիտական աշխատանքը հանրամատչելի տարբերակով հրատարակի, գիտնականը պետք է ավելի քան 2 հազար դոլար վճարի: Միաժամանակ, առանց հեղինակավոր ամսագրերում հրատարակման անհնար է գիտական աշխարհում կարիերա ստեղծել: Արդյունքում փակ շրջան է ստացվում:

Ըստ «Մեդուզա»-ի, գիտնականները ստիպված են լինում տարբեր ուղիներ փնտրել՝ անհրաժեշտ աշխատանքները գտնելու համար: Օրինակ՝ նրանք հատուկ ֆորումներ են ստեղծել, որտեղ գործընկերներին խնդրում են այս կամ այն աշխատանքն իրենց ուղարկել: Նույն նպատակով Twitter-ում նաև «մասնագիտական» հեշթեգ է ստեղծվել՝ #icanhazpdf:

Ղազախստանի ազգային տեխնիկական համալսարանն ավարտած Ալեքսանդրա Էլբակյանը նույնպես բախվել է այդ խնդրին՝ չկարողանալով իրեն թույլ տալ թանկարժեք հոդվածներ գնել: Եվ որոշել է պայքարել դրա դեմ: 2011 թվականին Էլբակյանը Sci-Hub կայքն է ստեղծել: Այն հետեյալ կերպ է գործում. հարցման ժամանակ ստուգվում է, արդյո՞ք անհրաժեշտ գիտական աշխատանքն առկա է մեկ այլ կայքի՝ LibGen-ի տվյալների բազայում: Եթե ոչ, ապա պոփոքիմը տանում է դեպի անհրաժեշտ հրատարակության կամ ամսագրի կայքեր: Դրանց հասանելիությունն ապահովում են այն գիտնականները, որոնց համալսարանները միացած են այս կամ այն տվյալների բազային: Ամեն անգամ առաջին անգամ փնտրվող հոդվածը

համայնում է LibGen-ի բազան: Հետագա հարցումների ժամանակ արդեն Sci-Hub-ն այն նշված կայքից է բերում: 2015 թվականի նոյեմբերին Նյու Յորքի դատարանը վճռել է հետ վերցնել sci-hub.org դոմենը: Վերցրել են նաև LibGen-ի դոմենը: Elsevier հրատարակությունը դատարանին վատահերցել է, որ Sci-Hub-ի օգնությամբ ամեն օր իր տվյալների բազայից հազարավոր աշխատանքներ են ներբեռնվում: Ըստ Էլբակյանի, բոլոր հրատարակություններն ու ամսագրերը հաշվի առնելու դեպքում, ընդհանուր առմամբ, խոսքը հարյուր հազարավոր հոդվածների մասին կլինի:

Elsevier-ն իր կորուստները գնահատում է 750-150.000 դոլար՝ յուրաքանչյուր ներբեռնված աշխատանքի համար, այսինքն՝ խոսքը կարող է, ընդհանուր առմամբ, մի քանի միլիարդ դոլարի մասին լինել: Ամեն դեպքում, հավանաբար, ամերիկյան դատարան ոչ ոք չի ներկայանա. Sci-Hub-ի եւ LibGen-ի սերվերները գտնվում են Ռուսաստանում եւ Նիդեռլանդներում, իսկ կայքերն արդեն աշխատում են այլ դոմենով:

Ալեքսանդրա Էլբակյանը տեղեկատվության ազատ տարածման կողմնակից է: Ամերիկյան դատարանին ուղղված նամակում նա քննադատել է Elsevier-ին այն բանի համար, որ այն կորզում է գիտնականների գումարները:

### Ոչ ոք թուրքերին չի հարցրել թե ինչու սպանեցին հայերին. Ծառլ Ազնավուրը ռուսերեն է սովորում



Ֆրանսիացիները ճանաչել են Հայոց ցեղասպանությունը, գերմանացիները նույնպես, ինչո՞ւ թուրքերը չպետք է ճանաչեն տեղի ունեցածը: Այս մասին ամերիկյան CNN հեռուստաալիքին տված հարցազրույցում նշել է Ֆրանսիացի հայտնի շանտոնիե Ծառլ Ազնավուրը:

«Ոչ ոք թուրքերին չի հարցրել թե ինչու սպանեցին հայերին: Ինչն էր պատճառը: Կրո՞նք, ես չեմ հավատում: Ես կարողացել եմ Դուրանը՝ հասկանալու, թե արդյոք այնտեղ նման բան կա գրված: Բացարձակ, հետևաբար պատճառը կրոնը չէր», - ասել է Ազնավուրը:

Հաղորդավոր Բեքի Անդերսոնի հարցին, թե ինչ է նշանակում իր համար հայ լինելը, շանտոնիեն պատասխանել է. «Ես հայ եմ եւ ես դա չեմ ժխտում: Ես չեմ սիրում նրանց, որոնք ինչ-որ բաներ են թաքցնում՝ վախենալով, որ ինչ-որ տեղ չեն ընդունվի: Դու չե՞ս սիրում հայերին, ուրեմն ես գնում եմ, հաջողություն»:

Հարցին, թե որն է երգչի հաջողության գաղտնիքը, Ազնավուրը պատասխանել է. «Ես ամեն գիշեր ընթերցում եմ մեկ ժամ եւ ամեն գիշեր՝ մինչ քնելը որեւէ նոր բան եմ սովորում օտար լեզվով»: Նա նշել է, որ հիմա ռուսերեն է սովորում:

### Հայոց ցեղասպանության եւ իսլամացված հայերի թեմաներին նվիրված միջոցառումներ Համբուրգում

Müslümanlaş(tır)ımlı Ermeniler  
Zwangsislamisierung der Armenier  
im Osmanischen Reich und in der Türkei



Գերմանիայի Համբուրգ քաղաքում փետրվարի 13-ին եւ 14-ին միջոցառումներ են տեղի ունեցել Հայոց ցեղասպանությանը եւ իսլամացված հայերի թեմաներով: Այդ մասին հաղորդում է Akuncq.net-ը:

Աղբյուրի համաձայն՝ սեմինարները կազմակերպվել են «Ռոզա Լյուքսեմբուրգ» անվամբ գերմանական հիմնադրամի կողմից: Փետրվարի 13-ին Համբուրգի պելեինների համայնքի սրահում կայացած «Իսլամացված հայերը Օսմանյան կայսրությունում եւ Թուրքիայում» վերնագրով սեմինարին սույն թեմայի շուրջ ելույթներով հանդես եկան Թուրքիայից Գերմանիա տեղափոխված, մասնագիտությամբ փաստաբան Իլիաս Գեւորգ Ույարը, Գերմանիայի պելեինների միությունների կրթության հարցով պատասխանատու Իսմայիլ Քափլանը եւ թուրքագետ, Արեւմտահայոց հարցերի ուսումնասիրության կենտրոնի աշխատակից Մելինե Անումյանը: Սեմինարի համակարգողն էր գերմանաբնակ թուրք գրող Դոդան Աքհանլըն, ով տարիներ շարունակ Թուրքիայի կողմից հետապնդվել է՝ Հայոց ցեղասպանությունը ճանաչելու եւ դատապարտելու համար: Միջոցառմանը մասնակցեցին շուրջ 150 հոգի, այդ թվում՝ 15 գերմանացիներ (թուրքերենով կազմակերպված սեմինարի ժամանակ կատարվում էր նաև գերմաներենով համաժամանակյա թարգմանություն): Նրանց մեջ էր նաև գերմանացի հայտնի ցեղասպանագետ Վոլֆգանգ Գուստը:

Փետրվարի 14-ին Եվրոպայի քարաբալըցիների միությունում (Քարաբալըն գյուղ է ներկայիս Յոզղատ նահանգում) կազմակերպված միջոցառումը կրում էր «Յոզղատը 100 տարի առաջ» խորագիրը: Սույն սեմինարի բանախոսներից Մելինե Անումյանը զեկուցում ունեցավ Յոզղատի հայության տեղահանության եւ կոտորածների դատավարության թեմայով, իսկ թուրք գրող Դոդան Աքհանլըն հանդես եկավ հիշելու եւ ամերիկացի մշակույթի մասին ելույթով:

### Թեհրանի եւ հյուսիսային իրանահայության պատգամավորը՝ դոկտ. Կարեն Խանլարեանն է, իսկ Սպահանի եւ հարավային իրանահայության պատգամավոր Ժորժիկ Աբրահամյանը

Փետրվարի 26-ին, կայացել են Իրանի Իսլամական խորհրդարանի 10-րդ շրջանի ընտրությունները: Իրանի բոլոր քաղաքացիների պես, թեհրանահայությունը եւ Իրանի հյուսիսային շրջանի այլ հայաբնակ քաղաքների



ընտրողները եւս ակտիվորեն մասնակցություն են ապահովել ընտրություններում:



Ինչպես նախորդ ընտրությունները, այս անգամ եւս հարավային իրանահայությունը կառչած մնալով իր քաղաքացիական ու ազգային իրավունքներին՝ խուժներամ շարքերով մասնակցեց ընտրություններին եւ ընտրողների շուրջ 99 տոկոսը քվեարկեց Ժողովի Աբրահամյանի օգտին:

## Միջազգային

### Պետղումայում առաջարկել են չեղյալ համարել 1921թ. Թուրքիայի հետ կնքած Մոսկվայի պայմանագիրը



ՌԴ Պետղումայի Կոմունիստական կուսակցության պատգամավորներ Վալերի Ռաչկինն ու Սերգեյ Օբուխովը դիմել են ՌԴ նախագահ Վլադիմիր Պուտինին եւ արագորժնախարար Սերգեյ Լավրովին՝ առաջարկելով խզել 1921թ. մարտի 16-ին ՌԽՖՍՀ իշխանությունների եւ Թուրքիայի միջեւ կնքված եղբայրության եւ բարեկամության մասին պայմանագիրը, հայտնում է «Իզվեստիա» պարբերականը:

«Թուրքական ագրեսիայի աճի պարագայում մենք այժմ պետք է իրավաբանորեն մշակենք մեր երկրի եւ նրա դաշնակիցների համար ոչ շահավետ բոլոր ռուս-թուրքական համաձայնությունները: Անկարան պետք է հասկանա, թե ինչի կարող է վերածվել հակամարտության սրումը», - ասել է Օբուխովը:

«Մայրավեդլիվայա Ռոսիա» կուսակցության պատգամավոր Օլեգ Պախոլկովի խոսքով՝ Թուրքիան իրոք շատ ծանր պայմաններ է առաջադրել, այդ թվում՝ Լեռնային Ղարաբաղին վերաբերող կետ: «Սակայն թուրքերին պետք է դաստիարակել: Այս աշխարհում ոչինչ հավերժ չէ: Եթե դուք այսօր դավաճան դիրքորոշում եք ընդունել, ուրեմն

պայմանագիրը խզելը համարժեք քայլ է: Այդ հարցում մեզ կաջակցի Հայաստանը», - ասել է Պախոլկովը:

Ընդ որում, նա նշել է, որ եթե անգամ պայմանագրի խզումը մեծ իրավաբանական ուժ չունենա, դա կարտահայտի իրենց տարածքային հավակնություններն առ այն, ինչի հետ ռուսական կողմը համաձայն չէ:



Թուրքիայի հետ բարեկամության եւ եղբայրության պայմանագրի խզումը դիտարկվել էր եւ նախկինում: Նացիզմի դեմ տարած հաղթանակից հետո ԽՍՀՄ-ը պահանջում էր Անկարայի հետ նոր համաձայնագիր կնքել, սակայն հրաժարվել էր այդ հավակնություններից Ստալինի մահվանից հետո:

«Երեք անդրկովկասյան հանրապետություններից երկուսը՝ Հայաստանն ու Վրաստանը, չեն ճանաչում պայմանագրի պայմանները: Պետք է հասկանանք, որ 1921թ. բոլշևիկների իշխանությունը մագից էր կախված», - ասել է Օբուխովը: Նշենք, որ այդ պայմանագրի համաձայն՝ Թուրքիային է անցել Կարսի մարզի մեծ մասը, նախկին Բաղուսմիի մարզի հարավային հատվածը, Երևանի նահանգի Սուրմալուի գավառը՝ Արարատ լեռան հետ:

### Զախարովա. ՌԴ ԱԳՆ-ն կուսումնասիրի Թուրքիայի հետ 1921 թվականի Մոսկվայի պայմանագիրը խզելու առաջարկը



ՌԴ ԱԳՆ-ն կուսումնասիրի Պետղումայի պատգամավորների առաջարկը՝ Թուրքիայի հետ բարեկամության պայմանագիրը խզելու վերաբերյալ: Այդ մասին հայտնել է գերատեսչության պաշտոնական ներկայացուցիչ Մարիա Զախարովան, տեղեկացնում է «ՌԻԱ Նովոստին»:

«ՌԴ ԱԳՆ-ն իրոք Ռուսաստանի Պետական դումայի մի շարք պատգամավորներից հարցում է ստացել վերոհիշյալ պայմանագիրը խզելու առաջարկով: Այս պահի դրությամբ կարող եմ նաեւ ասել, որ հարցումը պիտի ուսումնասիրվի,

կոնկրետ ինչ է առաջարկվում այնտեղ: Ըստ այդմ ամեն ինչ կարվի սահմանված կարգի համաձայն: Առայժմ պետք է ուսումնասիրել այդ նախաձեռնությունը», — չորեքշաբթի ճեպագրույցին ասել է Չխարովյան:

Հիշեցնենք, որ ՌԴ Պետդոմայի պատգամավորներ Վալերի Ռաշկինը եւ Սերգեյ Օրուխովը (երկուսն էլ ՌԴԿԿ-ից) Ռուսաստանի նախագահ Վլադիմիր Պուտինին եւ ՌԴ արտգործնախարար Սերգեյ Լավրովին առաջարկել են անվավեր ճանաչել Բարեկամության եւ եղբայրության մասին մոսկովյան պայմանագիրը, որը 1921 թվականի մարտի 16-ին ստորագրվել է ՌԽԳՄՀ-ի կառավարության եւ Թուրքիայի Ազգային մեծ ժողովի միջև: Իրենց նամակում պատգամավորները մատնանշում են Թուրքիայի ազդեցիկ պահվածքի հետեւողական գիծը:

## Թուրքիայում ԱՄՆ դեսպանին ԱԳՆ եւ կանչել՝ կապված քրդերի մասին պետքարտուղարության հայտարարության հետ



Անկարայում ԱՄՆ դեսպան Ջոն Բասսին կանչել են Թուրքիայի ԱԳ նախարարություն՝ կապված սիրիական քրդերի մասին ամերիկյան պետքարտուղարության հայտարարությունների հետ: NTV հեռուստաալիքի փոխանցմամբ, դիվանագետին փոխանցվել է այդ հարցի շուրջ «ԱՄՆ դիրքորոշման առնչությամբ Թուրքիայի մտահոգությունը»:

Ավելի վաղ ԱՄՆ պետքարտուղարության պաշտոնական ներկայացուցիչ Ջոն Բիրբին հայտարարել էր, որ Վաշինգտոնը «Ժողովրդական ինքնապաշտպանության ուժերն (ԺԻՈՒ) ահաբեկչական խմբավորում չի համարում եւ շարունակելու է սատարել նրանց»: ԺԻՈՒ-ն Դեմոկրատական միություն կուսակցության մարտական թեւն է, որին Անկարան համարում է ահաբեկչական կազմակերպություն եւ Քրդական աշխատավորական կուսակցության սիրիական թեւը:

Ըստ ՏԱՄՍ-ի, Բիրբին հաստատել է, որ Թուրքիայում ԱՄՆ դեսպանը կանչվել է Թուրքիայի ԱԳՆ՝ կապված քրդական հարցում Անկարայի եւ Վաշինգտոնի միջեւ տարաձայնությունների հետ:

## Իրանցիների ատելությունը թուրքերի հանդեպ

Թուրքերի մասին պարսկական նկարագրություններից շատերն այսօր կարող են դիտարկվել որպես ռասիստական, քանի որ դրանք բոլոր թուրքերին անարդարացիորեն պիտակավորում են միեւնույն կարծատիպով: Այս մասին իր հոդվածում նշել է «Քալիֆորնիա Կուրիեր» թերթի հրատարակիչ եւ խմբագիր Հարույթ Մասունյանը: Նա իր հոդվածում, մասնավորապես, գրում է.

«Նախորդ հազարամյակի ընթացքում երկու հարեւան իսլամական պետությունների՝ Պարսկաստանի եւ Օսմանյան կայսրության միջեւ հարաբերությունները տատանվել են խաղաղ գոյակցության եւ բացահայտ պատերազմի միջեւ: Այս երկու պետությունների բնակիչները ունեին ոչ միայն էթնիկական եւ լեզվական տարբերություններ, այլեւ բաժանված էին իրենց իսլամական հավատքով. պարսիկները շիա էին, իսկ թուրքերը՝ սուննի: Իրանի եւ Թուրքիայի միջեւ այս բաժանումները շարունակվում են մինչ օրս:



Շատ ընթերցողներ ծանոթ են հակաթուրքական հիշատակումներին արեւմտյան գրողների աշխատություններում, հատկապես իրար հաջորդող հայկական ջարդերից եւ ցեղասպանությունից հետո, ինչպիսին Ֆրանսիացի գրող Վիկտոր Հյուգոյի դատապարտող խոսքերն էին. «Այստեղով թուրքն է անցել. ամենուրեք սուգ է եւ ավեր»:

Այդուհանդերձ, քերին են հայտնի թուրքերի մասին հիշատակումները պարսկական գրականության մեջ: Պարսկահայ Ռուբինա Օհանյանը, որն այժմ բնակվում է Քալիֆորնիայի Գլենդել քաղաքում, լրացրել է այդ բացը իր՝ «Թուրք անվան եւ բառի մեկնաբանությունը իրանական գրականության մեջ» խորագիրը կրող գրքում: Օհանյանը մանրակրկիտ ուսումնասիրել է պարսկերենից հայերեն է թարգմանել միջնադարյան մի քանի պարսիկ նշանավոր բանաստեղծների տասնյակ տողեր, որոնք արտահայտել էին իրենց խիստ բացասական տպավորությունները թուրքերի մասին՝ բացահայտելով թուրքերի հանդեպ իրանցիների հակակրանքի խոր արմատները:

Թուրքերի մասին պարսկական հիշատակումները մեզ են հասել մեծանուն պարսիկ բանաստեղծներ Ֆիրդուսուց (10-րդ դար) եւ Հաֆեզից (14-րդ դար): Թուրքական ցեղերը առաջին անգամ ներխուժեցին Պարսկաստան 11-րդ դարում, որոնք հաջորդեցին սելջուկները: 13-րդ դարում Իրանը նվաճեցին մոնղոլները, այնուհետեւ՝ թուրքմենական ցեղերը, որոնք վերջնականապես պարտության մատնվեցին 1592 թվականին: Հետագա դարերի ընթացքում բազմաթիվ պատերազմներ տեղի ունեցան Պարսկաստանի եւ Օսմանյան կայսրության միջեւ:

Օհանյանն իր գրքում ներկայացրել է 13 պարսիկ բանաստեղծների եւ գրողների մեջբերումները: Մինչ հայերն իրենց սեփական ողբերգական հիշողություններն ունեն թուրքական բռնապետական իշխանության հետ կապված, հետաքրքիր է իմանալ նաեւ այլ ազգերի մոտ թուրքերի հետ շփումից առաջացած նույն բացասական փորձառությունները:

Ահա պարսիկ միջնադարյան բանաստեղծների որոշ տողեր, որոնք պարսկերենից հայերեն է թարգմանել Ռուբինա Օհանյանը.

Ֆիրդուսի (925 – 1020 ).



«Ոչ ոք թուրքերից իմաստություն չունի, Ոչ մի մարդ թուրքին չի հնազանդվի»:  
Ասադի Թուսի (11-րդ դար).  
«Ոչ ոք չտեսավ թուրքից երբեք հավատարմություն, Իրանցիներից տեսել են միայն հավատարմություն»:  
Խավաջա Աբդուլլահ Անսարի (1006 – 1088 ).  
«Չարմանք է, թե թուրքը սիրուց բան հասկանա, Քանզի թուրքից գարմանքն այն է՝ չթալանի, չգողանա»:  
Նիզամի (1140 – 1203 ).  
«Արքան անգամ չգիտեր՝ հավատարիմ թուրք չկա»:  
Անվարի (12-րդ դար)  
«Քանի դեռ չես ճամփա անցել ազնվագարմ նծույզով, Չգնաս, ճամփան լեցուն է արյունաբերու թուրքերով»:  
Խադանի (1120 – 1190).  
«Բարեկամաբար արյուն ըմպելն ավանդույթ է հին, Թուրքն արյունախում է ու չի ճանաչում իր բարեկամին»:  
Սաադի (1184 – 1283).  
«Այնժամ դրկեցիր դու մի ուսանող. Թուրք, որից վատթարը չկա»:  
Թուրքերի մասին այս պարսկական նկարագրություններից շատերն այսօր կարող են դիտարկվել որպես ռասիստական, քանի որ դրանք բոլոր թուրքերին անարդարացիորեն պիտակավորում են միեւնույն կարծատիպով: Բոլոր ազգերի մեջ էլ կան լավ ու վատ մարդիկ: Սակայն, իրական խնդիրը թուրքական պետության բիրտ քաղաքականությունն է, որ դաժանորեն ճնշել է ազգային փոքրամասնություններին եւ նվաճած երկրներին՝ հանգեցնելով զանգվածային ոճրագործությունների եւ ցեղասպանության ընդդեմ արարների, հայերի, ասորիների, կիպրացիների, հույների եւ իրանցիների...

*Թարգմանությունը՝ Ռուզաննա Ալիազյանի*

## Ռուսաստանը խզել է Թուրքիային սպառազինության մատակարարման բոլոր պայմանագրերը



Ռուսաստանը խզել է Թուրքիայի հետ ամբողջ ռազմատեխնիկական համագործակցությունը, ներառյալ սերվիսային պայմանագրերը, տեղեկացնում է «Ինտերֆաքսը»՝ վկայակոչելով Ռուսաստանի նախագահի ռազմատեխնիկական համագործակցության հարցերով օգնական Վլադիմիր Կոժինին:  
«Մենք պայմանագրեր ունեինք, մենք եւ հրաձգային սպառազինության, եւ հրետանային համակարգերի մատակարարումներ ունեինք: Բնականաբար, այժմ մատակարարումները եւ բոլոր պայմանագրերը, ներառյալ սերվիսայինները, դադարեցվել են», — հայտնել է Կոժինը:  
Նա նշել է, որ բանակցություններ եւ պայմանագրեր չեն լինի այնքան ժամանակ, «քանի դեռ իրավիճակը չի փոխվել այն ռակուրսով, որի մասին խոսել է Ռուսաստանի նախագահը»:

## Թուրքիային չգայրացնելու համար Բունդեսթագում Ցեղասպանության բանաձեռ ստեղծելը իսկական վախկոտություն է. Tagesschau



Մեր միակ նպատակը Թուրքիային մեր կողքին պահելն է, եւ նշանակություն չունի՝ հայերը կվերանան աշխարհի երեսից, թե ոչ: Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին Գերմանիայի կողմից արված այս նախադասությունն ավելի քան 100 տարի անց դեռ արդիական է: Այդ նախադասությունն ավելի կարեւոր է, քան Օսմանյան կայսրության հանցանքը ճանաչելու մասին Թուրքիային ուղղված Բունդեսթագի կոչը: Այս մասին Tagesschau գերմանական պարբերականում գրում է Միխայել Հոյսենը: Դարբերականը հիշեցնում է, որ մեկ տարի առաջ Գերմանիայի խորհրդարանը գրեթե «այո» ասաց 1915թ. հայոց ջարդերը ցեղասպանություն որակելուն, սակայն Գերմանիան նախկինի պես վախենում է գայրացնել Թուրքիային հատկապես որ վերջինս խոստացել է իր երկրում զսպել փախստականների հոսքը:  
«Բեռլինը նախկինի պես չի ուզում կորցնել Բոսֆորում իր դաշնակցին: Թուրքիան պետական գործընկեր է, ուստի Բեռլինում լռում են նաեւ այն հանցագործությունների մասին, որոնք այսօր տեղի են ունենում Թուրքիայի արեւելքում: 1915թ. էլ դա այդպես էր, եւ մինչ օրս ոչինչ չի փոխվել: Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին հայերի նկատմամբ ոճրագործությունները դադարեցնելու կոչին Գերմանիայի ռեյխկանցլեր Թեոբալդ ֆոն Բեթման Հոլվեգը պատասխանել էր. «Մեր միակ նպատակն է Թուրքիային մեր կողքին պահել եւ նշանակություն չունի՝ հայերը կվերանան աշխարհի երեսից, թե ոչ»,- գրում է հոդվածագիրը:  
Հեղինակը նշում է, որ Թուրքիան այսօր շարունակում է հայածել քրդերին, իսկ Արեւմուտքը լռում է: «Թուրքիան Արեւմուտքի համար այս պահին ամենակարեւոր երկիրն է փախստականների զսպման առումով: Ուստի թուրքերին Բունդեսթագի բանաձեռով գայրացնելը կամ Հայոց ջարդերը պաշտոնապես ցեղասպանություն որակելը կառուցողական չէր լինի, այսպես են կարծում քաղաքական գործիչները»,- գրում է հեղինակը՝ քննադատելով այդ տեսակետը:  
«Այդ կարծիքն իսկական վախկոտություն է: Ցեղասպանությունը ցեղասպանություն է՝ անկախ այն բանից, թե ով է դա իրագործել: Եվ այն պետք է իր անունով կոչել: Ոչ միայն հայերի համար, ովքեր այդքան երկար սպասել են, որ իրենց նախնիների դեմ գործած ոճիրը ճանաչվի, այլ նաեւ նման հանցագործությունները կանխելու համար»:  
Ուստի հիմա, առավել քան երբեւէ կարեւոր է, որ Բունդեսթագը Թուրքիային պաշտոնապես կոչ անի վերջապես ճանաչել օսմանների գործած հանցագործությունը»,- եզրափակում է հոդվածագիրը:



## Էրդողանի կինն անդրադարձել է Հայկական հարցին



Թուրքիայի նախագահ Ռեջեփ Թայիփ Էրդողանի կինը՝ Էմինե Էրդողանը մի միջոցառման ժամանակ անդրադարձել է Թուրքիայում առկա ազգային խնդիրներին: Թուրքական Haber.sol-ի փոխանցմամբ՝ Թուրքիայի նախագահի կինը՝ Էմինե Էրդողանը Աթաշեհիրի շրջանի Sheraton հյուրանոցում կազմակերպված միջոցառման ժամանակ քաղաքական ելույթով է հանդես եկել, ինչը զարմացրել է ներկաներին:

«Տարածաշրջանում այսքան խնդիրների հետ պայքարող Թուրքիան «հզոր» կամքով ձիգ կանգնած է: Այս երկրում ստատուս քվոների դեմ պատերազմի մեջ մտանք ու որպեզ ազգ հաղթեցինք: Ներկայում համաշխարհային ուժերը ցանկանում ենք մեր հողերի վրա իրենց նպատակներն առաջ տանել»,-ասել է Էմինե Էրդողանը՝ ասելով, թե չի կարծում, որ Թուրքիայում Հայկական կամ քրդական հարց գոյություն ունի:

## Հասարակական

### Փետրվարյան արկածախնդրությունը եւ Ղարաբաղի կորուստը

էդ. Բաղդասարյան

Ինչպես արդեն անդրադարձել ենք Դաշնակցականների փետրվարյան արկածախնդրությանը, որը տեղի ունեցավ 1921 թ. փետրվարի 13-18-ին, եւ որի հետեւանքով ժամանակավորապես հայ սովետական կառավարությունը հեռացավ Երեւանից իսկ Սիմոն Վրացյանի «Փրկության կոմիտոն» ստանձնեց Հայաստանի իշխանությունը, ծանր հետեւանքներ ունեցավ հայ ժողովրդի համար: Վերջինիս իշխանությունը շարունակվեց մինչեւ ապրիլի 2-ը, երբ Հայ կոմունիստները, այդ օրը կրկին անցան իշխանության գլուխ եւ դաշնակցականները փախան Չանգեզուր ապա Թավրիզ եւ Ատրպատականի այլ վայրեր ու Իրանի ներքին շրջաններ:

Նույն այդ ժամանակաշրջանում 1921 թ. փետրվարի 18-ապրիլի 2 երբ սովետական կառավարությունը հեռացել էր Երեւանից եւ Երեւանի իշխանությունը գտնվում էր Սիմոն վրացյանի ձեռքում, տեղի ունեցավ Մոսկվայի պայմանագրի ստրագուստը մարտի 16 Սովետական Ռուսաստանի եւ քեմալական մեծ ժողովի միջեւ, առանց Հայաստանի ներկայացուցիչների ներկայությամբ, որը նախագծեց Կարսի Հայ-թուրքական պայմանագիրը, ի վնաս Հայաստանի եւ հայ ժողովրդի ազգային շահերի, եւ

Սովետական Հայաստանին պարտադրեց հայկական հողերի կրկնակի կորուստը:

Փետրվարյան արկածախնդրությունը իրականացավ դաշնակցության, հետադիմական տարրերի եւ քեմալականների օժանդակությամբ ու Դրաստամատ Կանայանի Դրո դավադրությամբ: Այդ արկածախնդրությունը խլեց 20,000 հայորդիների կյանքը եւ պատճառեց նոր ավերածություններ:

